Ազգ
Azg
15 ՄԱՐՏ 2013 ՈՒՐԲԱԹ 38(5121)
ISSN: 1829-1651

# Ամենայն հայոց հայրապետը՝ Հռոմի նորընտիր պապին. «Ուրախ ենք Ձեր անկեղծ սիրուն՝ հայ ժողովրդի հանդեպ»

***Մարտի 14-ին Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Նորին Սրբություն Ֆրանցիսկ պապին՝ Հռոմի եպիսկոպոս եւ Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ ընտրվելու առիթով: Հայրապետական շնորհավորագրում մասնավորաբար ասվում է.***

**«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,**

**Սուրբ Պետրոսի աթոռի գահակալ ընտրվելու բերկրալի առիթով Ձերդ Սրբությանն ենք հղում եղբայրական սիրո մեր ջերմ ողջույնները եւ շնորհավորանքները: Մեր աղոթքն է, որ Տերը արգասավորի Ձերդ Սրբության առաքելահաստատ պատշաճ արդյունաշատ եւ երկարամյա գործունեությամբ՝ ի փառս Աստուծո եւ ի պայծառություն Քրիստոսի Սուրբ եկեղեցու:**

**Քաղցրությամբ ենք հիշում մեր հանդիպումները Ձերդ Սրբության հետ Արգենտինայում, երբ առիթն ենք ունեցել ճանաչելու Ձեզ որպես քաջ, իմաստուն եւ արդարամիտ հովվի: Մենք ուրախ ենք անդրադառնալ Ձեր անկեղծ սիրուն, որ ցուցաբերում եք հայ ժողովրդի հանդեպ:**

**Ուրախությամբ ենք հաստատում, որ մեր եկեղեցիների պատմական հարաբերությունները հատկանշված են եղբայրական ջերմությամբ: Մեծապես կարեւորում ենք այն առաջընթացը, որ արձանագրել են մեր եկեղեցիները մեր եւ մեր նախորդների շրջանում՝ փոխադարձ այցերով, կրթական եւ բարեսիրական բազում ծրագրերով:**

**Աղոթում ենք, որ այս հարաբերությունները առավել հարստանան եւ զարգանան սիրո գործակցության նոր ձեռնարկումներով՝ ի խնդիր մարդկության առջեւ ծառացած արդի մարտահրավերների հաղթահարման, ժողովուրդների ու ազգերի միջեւ երկխոսության եւ բարեկամության...»:**

# Սահմանադրական դատարանը ուժի մեջ թողեց ԿԸՀ-ի որոշումը

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**


ՖՈՏՈԼՈՒՐ

Սահմանադրական դատարանը, ինչպես եւ սպասվում էր դատավարության երեք օրերի ընթացքից, երեկ ուժի մեջ թողեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի փետրվարի 25-ի որոշումը նախագահական ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Այդպիսով փաստորեն մերժվեցին նախկին նախագահական թեկնածուներ Րաֆֆի Հովհաննիսյանի եւ Անդրիաս Ղուկասյանի՝ այդ որոշումը վիճարկող դիմումները: ՍԴ-ի նախագահ Գագիկ Հարությունյանը երեկ միայն ներկայացրեց ՍԴ-ի ծավալուն որոշման եզրափակիչ 9 էջը, ողջ տեքստը մոտակայում կհրապարակվի, իսկ կոնկրետ որոշումն ուժի մեջ է հրապարակման պահից եւ վերջնական է:

Հիմնավորումների թվում շեշտվում էր, որ ընտրության արդյունքները սահմանված ժամկետներում դիմող կողմը չի վիճարկել, ԿԸՀ-ն դիմում չի ներկայացրել, եւ արդյունքների վերաբերյալ կասկածները փարատելու այդ հնարավորությունը կորսվել է: Նշվում էին եւ տեղերում վերահսկողության իրացման՝ թեկնածուների իրավասուների ոչ պատշաճ կատարումը, եւ բոլոր հանձնաժողովներում նրանց ընդգրկված չլինելը, եւ ընտրախախտումների ապացուցողական հիմքի բացակայությունը եւ այլն: Ի դեպ, ՍԴ նախագահն անդրադարձավ նաեւ ընտրական օրենսգրքի բացթողումներին, որոնք անհրաժեշտ է վերանայել՝ հանրային վստահությունը վերականգնելու, հանդուրժողական մթնոլորտի ձեւավորման համար, ինչը ՍԴ-ում քննվող գործի շրջանակներից դուրս է: Խոսք էր գնում նաեւ առանձին տեղամասերում առանձին թերացումների մասին, որոնք եւս չեն վիճարկվել: Հիմնավորումները փնտրեք ՍԴ կայքում մոտակա օրերին:

*Տես էջ 8*

# Պապը ժամանակին կոչ էր անում Թուրքիային՝ անվերապահորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը



«Յոթ տարի առաջ այժմ Հռոմի նորընտիր պապ Ֆրանցիսկը Թուրքիային կոչ է արել անվերապահորեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը», այս մասին հիշեցրել է Լոս Անջելեսի «Ասպարէզ» թերթը: 2006-ին դեռեւս արքեպիսկոպոս Խորխե Մարիո Բերգոլիոն Հայոց ցեղասպանության 91-րդ տարելիցի հիշատակի միջոցառումների ժամանակ Բուենոս Այրեսում հանդես է եկել նման կոչով՝ Մեծ եղեռնը բնութագրելով «հայ ժողովրդի եւ ողջ մարդկության դեմ Օսմանյան կայսրության ծանրագույն հանցագործություն»:

Հիշեցնենք, որ մարտի 13-ին ուշ երեկոյան հայտնի դարձավ, որ Հռոմի պապ է ընտրվել արգենտինացի 76-ամյա կարդինալ Բերգոլիոն՝ որպես պապ կրելով Ֆրանցիսկ անունը եւ դառնալով Հռոմի պապ ընտրված ճիզվիտական ուխտից առաջինը, նաեւ առաջին լատինամերիկացին մոտ 1200 տարի կատարվող պապի ընտրություններում:

Ֆրանցիսկ պապին ընտրվելու առթիվ շնորհավորել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: **Վ. Պ.**

# Վ. Պուտին. «Ռուսաստանն ու Հայաստանը ներդրումային մեծ ծրագրեր ունեն»

## *Արա Աբրահամյան. «Երկու երկրները մնում են հուսալի դաշնակիցներ»*

**Նովո-Օգարյովոյում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն ասել է, որ Ռուսաստանը մտադիր է մեծացնել ներդրումների ծավալը Հայաստանի տնտեսության մեջ: «Ունենք համատեղ ներդրումների մեծ, հեռանկարային, լավ ծրագրեր», ընդգծել է նա, հիշեցնելով, որ Ռուսաստանն առաջին տեղում է Հայաստանի տնտեսության մեջ իր ներդրումների ծավալով՝ ավելի քան 3 մլրդ դոլար:**

**Անցյալ տարի երկկողմ ապրանքաշրջանառությունն աճել է ավելի քան 20 տոկոսով: Ինտերֆաքս գործակալությունը մեջբերում է Պուտինի այն խոսքերը, որ Մոսկվա-Երեւան հարաբերությունները առանձնահատուկ են:**

**Լայն շփումներ են իրականացվում նաեւ հումանիտար մակարդակով. Ռուսաստանում կա շատ մեծ հայկական համայնք: «Հայերը մեր երկրի շատ օրինավոր եւ արդյունավետորեն աշխատող քաղաքացիներն են», ասել է Պուտինը:**

**Նա Ս. Սարգսյանին շնորհավորել է ՀՀ նախագահ վերընտրվելու առթիվ: Ս. Սարգսյանը հայտարարել է, որ վերընտրվելուց հետո դա իր արտասահմանյան առաջին ուղեւորությունն է, եւ դա բնական է: «Ռուսաստանը մեր ռազմավարական գործընկերն է, եւ դրանով ամեն ինչ ասված է», նշել է ՀՀ նախագահը:**

**Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը բանակցությունների արդյունքների կապակցությամբ Ինտերֆաքսին տված հարցազրույցում կարեւորել է, որ Պուտինը դրական գնահատական է տալիս ՌԴ հայկական համայնքին: «Ռուսաստանում մենք իրոք շատ ենք՝ գրեթե 2,5 միլիոն: Մենք բոլորս ռուսաստանցիներ ենք: Երջանիկ ենք, որ Ռուսաստանն ու Հայաստանը որեւէ տարաձայնություն չունեն, եւ դա պետք է օրինակ ծառայի նախկին ԽՍՀՄ մյուս հանրապետություններին», ասել է նա՝ ավելացնելով, որ երկու երկրները մնում են ռազմավարական գործընկերներ եւ հուսալի դաշնակիցներ:**

# Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»



Երեկ, մարտի 14-ին հայ ժողովուրդը, հայ մտավորական աշխարհը վերջին հրաժեշտը տվեց մեր գեղանկարչության Վարպետին՝ Հակոբ Հակոբյանին: Մեկնեց. նա գնաց միախառնվելու հայրենի հողի իր սիրած գույներին, գնաց հանդիպելու Կոմիտասի անվան Պանթեոնում ննջող մեր մյուս մեծերին: Հայաստան լեռնաշխարհի, հայ մարդու Հակոբյանական վերծանումները հայրենիքի բնանկարի նոր գունային հայտնաբերումներ եղան՝ անկեղծ զգացումի ու խոհի ազատ տարածություններ: Իր նկարի խոհականությունը Վարպետը տեղափոխեց նաեւ գրի, էսսեագրության դաշտ՝ դառնալով յուրատեսակ վավերագրողը իր ժամանակի ոգու՝ այդ հրապարակումները վերջին տարիներին վստահելով «**Ազգի**» այս էջերին: Վաղվա մեր թողարկումը նվիրված է Հակոբ Հակոբյանի պայծառ հիշատակին. Տիգրան Մանսուրյանի, Երվանդ Տեր-Խաչատրյանի, Երվանդ Ազատյանի, Թորոս Թորանյանի, Նարեկ արք. Այվազյանի, Սարգիս Վահագնի հրաժեշտի խոսքերը, Հակոբ Վարդիվառյանի անտիպ հարցազրույցը: **Ս. Բ.**

ԳՈՒՅԺ

# Արամայիս Սահակյան



Վերջին մեկ տարին հիվանդ էր, արյան տկարություն ուներ: Սակայն թվում էր, որ կհաղթահարի՝ շնորհիվ իր զվարթ բնավորության, միշտ դեպի հումորը տրամադրվածության եւ համաժողովրդական սիրո, որը նա վայելում էր շնորհիվ իր պարզ ու գողտրիկ ոտանավորների, երգ-երաժշտության վերածված քերթվածների, ինչպես նաեւ «Ոզնի» երգիծական միակ շաբաթաթերթի:

Ավա՜ղ, չպարփինվեց, եւ երեկ, 77 տարեկանում կնքեց մահկանացուն: Արծվաշեն գյուղում էր ծնվել նա, 1936 թ. մայիսի 24-ին: Ավարտել էր Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտը, հետեւել Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի բարձրագույն դասընթացներին: Աշխատել է «Ավանգարդ» թերթում, «Գարուն» ամսագրում, այնուհետեւ՝ 1982 թ.-ից՝ «Ոզնի» շաբաթաթերթում որպես խմբագիր: Հրատարակել է «Աստղիկներ», «Սիրո համար», «Մենք միասին ենք», «Ապրել եւ սիրել», «Երջանիկ եղեք» եւ այլ ժողովածուներ: Հեղինակել ու վարել է հեռուստատեսային «Ծիծաղի տուն» հաղորդաշարը: Սիրում էր իր ընկերներին ողջունելիս նրանց պատվել «Աշխարհի ամենասիրուն երկրորդ տղամարդ» տիտղոսով, առաջին «ամենասիրուն տղամարդու» պատիվը վերապահելով իրեն:

Սիրուն եւ զվարթ ներկայություն էր: Ընդմիշտ զրկվեցինք այդ ներկայությունից:

# Արգամ Այվազյան. «Նախիջեւանում այժմ չկան խաչքար եւ վանք»

«Այժմյան խաչքարերը տարբերվում են հին ժամանակների խաչքարերից: Ժամանակները բերում են նոր մտածողություն` այս դեպքում զարդանախշերի առումով»,- երեկ լրագրողների հետ հանդիպմանը նշեց հայագետ-նախիջեւանագետ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ **Արգամ Այվազյանը**: Սակայն նա փաստում է, որ խորհրդային տարիներից ի վեր խաչքարագործությունը նոր վերելք ապրեց:

Անդրադառնալով Նախիջեւանի խաչքարերի վիճակին` ընդգծեց. «Նախիջեւանում այժմ չկան խաչքար եւ վանք: Այդ տարածքում 1998-2006թթ. ադրբեջանցիները ավերեցին ահռելի թվով հայկական խաչքարեր»:

Բանախոսը խորհրդային շրջանում անձնական միջոցներով գնացել է Նախիջեւան եւ ուսումնասիրել տեղանքը` հասցնելով լուսանկարել խաչքարեր, որոնց հիման վրա տպագրել է գրքեր. «Այսօր մենք լավ չենք ուսումնասիրում մեր խաչքարերը: Ընդամենը մի քանի գիրք ունենք հայկական խաչքարերի մասին: Սակայն ՀՀ տարածքում գտնվող խաչքարերն սպասում են ուսումնասիրողներին»: Արգամ Այվազյանը ցավով նշում է, որ նույն վիճակում է նաեւ որմնանկարչությունը:

Անդրադառնալով Ջուղայի խաչքարերի վերականգնման աշխատանքներին` Արգամ Այվազյանն ասաց, որ Գյումրիում բացվել է Ջուղայի խաչքարերի պուրակ, որտեղ կան շուրջ 20 կրկնօրինակված խաչքարեր:




*Վարազդատ Համբարձումյան եւ Արգամ Այվազյան*

Այսօր զարգացած չէ խաչքարագործության դպրոցը, իր հերթին նկատեց քանդակագործ **Վարազդատ Համբարձումյանը**: Բանախոսը նշում է, որ խաչքարագործության դասավանդման փորձեր արվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, ինչպես նաեւ Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում, սակայն զարգացում չունեցան: Խաչքարագործն ընդգծում է, որ իրենք արվեստանոցներում ունեն աշակերտներ, սակայն շատ կարեւոր է, որ նրանք չդառնան փորագրիչ-քանդակագործ, այլ բազմակողմանիորեն զարգանան եւ դառնան իսկական խաչքարագործ: Ըստ նրա` խաչքարագործությունը չունի անցյալ, ներկա եւ ապագա: Խաչքարի մեջ կան երգ, աղոթք եւ մշակույթ:

Վարազդատ Համբարձումյանն ուրախությամբ փաստում է, որ խաչքարագործությունը մեր ժողովրդի մեջ որպես կոդ ի վերուստ է դրված. «Յուրաքանչյուր խաչքարի մեջ պետք է դնես սեր, հավատ եւ ջերմություն: Խաչքարը կյանքի ծառ է»: Ջուղայի խաչքարերից շուրջ 17-ը կրկնօրինակել է Վ. Համբարձումյանը:

Վերջում Արգամ Այվազյանը պաշտոնյաներին եւ լրատվամիջոցներին հորդորեց չշփոթել Նոր Ջուղան եւ Հին Ջուղան. «Նոր Ջուղան Պարսկաստանի տարածքում է, իսկ Հին Ջուղան` Նախիջեւանի»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Վրանները` միջազգային եւ հայկական քաղաքականության մեջ



Լիբիայի նախկին առաջնորդ, գնդապետ Մուամմար Քադաֆֆին արտասահման ուղեւորվելիս` ի թիվս այլ անհրաժեշտ բաների, պարտադիր վերցնում էր նաեւ իր սեփական վրանը. Քադդաֆին երբեք հյուրանոցներում չէր գիշերում: Լիբիայի նախկին առաջնորդի վրանը տեղադրվել է, օրինակ, Նյու Յորքում` ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի առջեւ, Մոսկվայում` Կարմիր հրապարակում, այլուր, ամենուր, որտեղ եղել է Քադդաֆին: Միեւնույն ժամանակ, օրինակ` Կարմիր հրապարակը Մոսկվայի համար ոչ միայն քաղաքային տարածք է, այլեւ պատմամշակութային օբյեկտ, պետական խնամության ենթակա, սակայն մոսկովյան ոստիկանության ու ռուսական իշխանությունների մտքով անգամ չի անցել, որ Քադդաֆիի վրանը մթագնում է պատմամշակութային օբյեկտի արտաքին տեսքը եւ կամ հրապարակ այցելող մոսկվացիների ու զբոսաշրջիկների զբոսնելուն խոչընդոտում է...

Այժմ` ըստ էության, Ազատության հրապարակում արդեն մի քանի օր Րաֆֆի Հովհաննիսյանի կողմնակիցները Րաֆֆի Հովհաննիսյանի համար վրան են ցանկանում տեղադրել, ապարդյուն, ոստիկանությունը թույլ չի տալիս: Երբ ոստիկանները Րաֆֆիի վրանը թույլ չտվեցին տեղադրել հենց Ազատության հրապարակում, երեկ փորձ արվեց տեղադրել ոչ թե հրապարակում` ասֆալտին, այլ` հրապարակը շրջապատող խոտածածկին: Այդուհանդերձ ոստիկանությունը նաեւ այս տեղանքում վրանի տեղադրումն ապօրինի որակեց ու թույլ չտվեց: Երեւանի փոխոստիկանապետ **Վալերի Օսիպյանը** վրանի տեղադրման արգելքը հիմնավորել է, որ կխանգարի սրճարաններ այցելողներին, «որոնց իրավունքը մենք պարտավոր ենք պաշտպանել», ասել է հարգարժան Օսիպյանը: Մյուս կողմից, սրճարան այցելողներից շատերը տեղում գտնվող լրագրողների հետ զրույցում խոստովանել են, որ վրանը եթե տեղադրվի, ապա իրենց չի խանգարի... Հետեւաբար, եթե իրապես մեր ոստիկանությունը, արգելելով Րաֆֆի Հովհաննիսյանի համար վրանի տեղադրումը հրապարակում կամ դրան մերձ տարածքում, «պաշտպանում է սրճարան այցելողների իրավունքները», ապա վերջիններս, գոնե դրանց մի մասը, իրենց իրավունքների խոչընդոտման փաստ ամենեւին էլ չեն տեսնում, ուրեմն... Ուրեմն, ինչպես յուրաքանչյուր հարց, այս մեկն էլ մյուս երեսն ունի: Տրամաբանական է, որ հացադուլի մեջ գտնվող անձը, անկախ նրանից` նախագահի թեկնածու է, թե սովորական քաղաքացի, վրանում պատսպարվելու, հանգստանալու կարիք առավել զգում է գիշերը, ուշ ժամերի, մինչդեռ Րաֆֆի Հովհաննիսյանի համար վրան ցանկացողները ցանկանում են տեղադրել հենց ցերեկը, հատկապես այն ժամերին, երբ Րաֆֆին ունենում է բավականին այցելուներ...

Ինչեւէ, դժվար է ասել, թե ո՞րն է ավելի մթագնում Ազատության հրապարակի պատմամշակութային տեսքը, բոլորի` այդ թվում հրապարակում խաղացող երեխաների, կամ սրճարաններում այցելուների աչքի առջեւ նստարանին պառկած, նստած, գետնին նստած հանգստացող Րաֆֆի Հովհաննիսյանի տե՞սքը, թե պարզապես տեղադրված վրանը: Դժվար է ասել նաեւ, թե Րաֆֆիի կողքին նստացույց անող երիտասարդները ավելի շատ պայքարո՞ւմ են, թե՞ պարզապես հաճույք ստանում ոչինչ չանելուց, ավելի ճիշտ` Րաֆֆիի համար վրան տեղադրելու ապարդյուն ջանքերը հեռախոսներով նկարահանելուց ու համացանց «գցելուց»:

Ի դեպ, գնդապետ Քադդաֆիի վրանն իր չափերով անհամեմատ ավելի մեծ էր, քան այն վրանը, որը ցանկանում են տեղադրել Ազատության հրապարակում:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ



# Հնարավոր է լայն համագործակցություն ե՛ւ Ռուսաստանի, ե՛ւ Եվրոպայի հետ

Նորընտիր նախագահ Սերժ Սարգսյանի առաջին պաշտոնական այցը Մոսկվա հաստատում է, որ Ռուսաստանը Հայաստանի համար կարեւորագույն ռազմավարական գործընկեր է: «Կովկաս» ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանի գնահատմամբ` երկու այցերը` նախ Մոսկվա, հետո` Բրյուսել, փաստեցին կարեւորության եւ համագործակցության այն բարձր մակարդակը, որ Հայաստանն ունի Ռուսաստանի հետ:

Իսկանդարյանը համոզված է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ հանդիպմանը քննարկվել են ռազմաքաղաքական ոլորտին առնչվող համագործակցության նոր ուղիներ: Այս համատեքստում քաղաքագետը հիշեցնում է, որ վերջերս Երեւան էր ժամանել ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն, միաժամանակ նույն ոլորտի վերաբերյալ Ռուսաստանն ու Ադրբեջանը լուրջ տարաձայնություններ ունեն, մասնավորապես խոսքը վերաբերում է Գաբալայի կայանին: «Ամենայն հավանականությամբ այս ոլորտում Հայաստանի եւ Ռուսաստանի համագործակցությունը կաճի»:

Իսկանդարյանը չի բացառում, որ երկու երկրների նախագահները քննարկել են նաեւ գազի գինը: «Կովկաս» ինստիտուտի տնօրենը համոզված է` գազի գինը կբարձրանա, բայց ընդունելի կլինի Հայաստանի համար:

Անդրադառնալով արտաքին քաղաքականությանը, Իսկանդարյանի գնահատմամբ, Հայաստանը կարողանում է շատ ճիշտ համագործակցել բոլոր երկրների հետ: Նա շեշտում է, որ Հայաստանն ունի լավ հարաբերություններ ԱՄՆ-ի հետ, սակայն Իրանի հետ հարաբերություններն էլ բարձր մակարդակի վրա են: Մեր երկիրը պահպանում է բարեկամական-եղբայրական հարաբերություններ Ռուսաստանի եւ Վրաստանի հետ: Հետեւաբար, Հայաստանը կկարողանա ելքեր գտնել որպեսզի համագործակցի ե՛ւ Եվրոպական, ե՛ւ Եվրասիական միության հետ: «Սակայն դրան զուգահեռ, եվրոպական կողմը խանդում է հայ-ռուսական գրեթե բոլոր ոլորտներում զարգացող համագործակցության համար, իսկ Ռուսաստանն էլ իր հերթին խանդում է հայ-եվրոպական կապերի համար: Այս խանդը գրեթե նույնքան է մեծ է, որքան ամերիկացիների խանդը Իրան-Հայաստան հարաբերությունների նկատմամբ կամ հակառակը»: Իսկանդարյանը համոզված է, որ Հայաստանին կհաջողվի ստեղծել մի մոդել, որտեղ կհամագործակցի տարբեր կառույցների հետ: «Այս շրջանում Սերժ Սարգսյանի առջեւ դրված առաջադրանքն է համոզել Ռուսաստանին եւ Եվրոպային, որ նման ֆորմատը հնարավոր է իրագործել»:

Հ. Հ.

# Գերմանիա այցն ավարտվեց, այսօր` Հունաստան

Մարտի 13-ին Բունդեսթագում ներկայացված տարբեր կուսակցությունների պատգամավորների հետ հանդիպումով մեկնարկել է Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի այցելությունը Բեռլին:

Արտգործնախարարության հաղորդագրության համաձայն, նախարար **Նալբանդյանը**, գոհունակություն հայտնելով Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ հաստատված բարձր մակարդակի քաղաքական երկխոսության կապակցությամբ, հատկապես կարեւորել է երկու երկրների խորհրդարանների սերտ համագործակցությունը` օրենսդիր մարմինների ղեկավարների փոխայցելությունները, միջխորհրդարանական բարեկամության խմբերի գործունեությունը, փոխգործակցությունը միջազգային կազմակերպությունների խորհրդարանական վեհաժողովներում:

Քննարկվել են տարածաշրջանային խնդիրներ, Նալբանդյանը մանրամասն ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ Հայաստանի եւ միջազգային հանրության կողմից գործադրվող ջանքերը:

Այնուհետեւ Էդվարդ Նալբանդյանը հանդիպել է կանցլեր Անգելա Մերկելի արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով գլխավոր խորհրդական Քրիստոֆ Հոյսգենի հետ: Նույն օրը երեկոյան Հայաստանի արտգործնախարարը հյուրընկալվել է Գերմանիայի արտաքին քաղաքականության խորհրդում, որտեղ հանդես է եկել Հայաստանի արտաքին քաղաքականության մասին ծավալուն ելույթով, պատասխանել ներկա ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյաների, դիվանագետների, քաղաքագետների եւ լրագրողների բազմաթիվ հարցերին:

Հիշեցնենք, որ մարտի 13-14-ը Նալբանդյանը Գերմանիայի ԱԳ նախարար Գիդո Վեստերվելեի հրավերով աշխատանքային այց էր կատարել Բեռլին, իսկ այսօր` մարտի 15-ին, Հունաստանի ԱԳ նախարար Դիմիտրիս Ավրամոպուլոսի հրավերով պաշտոնական այցելությամբ նախարար Նալբանդյանը կլինի Աթենքում, ուր հանդիպումներ կունենա երկրի բարձրագույն ղեկավարության հետ:

Վ. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ուսանողական վարկերը կհամաֆինանսավորի կառավարությունը

## *Գերազանցիկների համար կսուբսիդավորվի 3 տոկոսը, մյուսների համար՝ 2 տոկոսը*

Ուսանողներին տրամադրվող ուսումնական վարկերի տոկոսները կհամաֆինանսավորվեն կառավարության կողմից: Երեկ ընդունված որոշմամբ, հատուկ վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի տոկոսագումարները կառավարությունը կհամաֆինանսավորի 2 կամ 3 տոկոսային կետով: Այդ նպատակով պետական բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրվեց 21,5 մլն դրամ:

Ինչպես հայտնեց հարցը ներկայացնող ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը**, ֆինանսավորումը կիրականացվի «Բնակարան երիտասարդներին» վարկային կազմակերպության միջոցով: Նախատեսված գումարը կտրամադրվի ծրագրի շրջանակներում համագործակցության համար ընտրված բանկերին եւ վարկային կազմակերպություններին:

Ֆինանսների նախարարը հայտնեց, որ երիտասարդներին աջակցելու նպատակով մշակվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի եւ պետական կամ պետական հավատարմագրում ունեցող բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի եւ մագիստրատուրայի ուսանողներին տրամադրվող ուսումնական վարկերի հատուկ վարկային ծրագիր: Ծրագրի հիմնական նպատակն է թեթեւացնել վճարովի կարգով սովորող ուսանողների ուսման վարձի բեռը եւ գրավիչ դարձնել բարձրագույն կրթություն ստանալը:

Համաձայն ծրագրի, 2013-ի ընթացքում կտրամադրվեն մոտավորապես 1 մլրդ դրամ գումարի չափով վարկեր: Դրանք կտրամադրվեն 10 տարի մարման ժամկետով՝ առաջին 4 տարիների համար արտոնյալ ժամկետով, երբ կմարվեն միայն տոկոսագումարները: Տրամադրված վարկերը կունենան 12 տոկոս տարեկան դրույքաչափ, որի 2 տոկոսը կսուբսիդավորվի ծրագրի բոլոր մասնակիցների համար, իսկ 3 տոկոսը՝ նախորդ մեկ տարվա ընթացքում գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողների համար: Համաձայն կանխատեսումների, գերազանցիկները կկազմեն ծրագրի վարկառուների մոտ 15 տոկոսը, որոնց համար 2013-ին կտրամադրվի 4,5 մլն դրամ սուբսիդիա եւ 17 մլն դրամ մնացած ուսանողների համար:

Ա. Ս.

# Տիգրան Սարգսյան. «Միեւնույն գույքը տարբեր գնահատողներ էական տարբերություններով են գնահատում»

Կառավարությունը երեկ հավանություն տվեց «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» օրենքում եւ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու նախագծերին: Այդ կապակցությամբ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** հետեւյալն ասաց. «Մենք Համաշխարհային բանկից առաջարկություններ էինք ստացել ֆինանսական միջոցները հասանելի դարձնելու վերաբերյալ, եւ այնտեղ մի դրվագ կար, որը վերաբերում էր անշարժ գույքի գնահատմանը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է այն բանին, որ միեւնույն գույքը տարբեր գնահատողներ էական տարբերություններով են գնահատում, եւ խնդիրն այն է, որ, ասենք, առեւտրային բանկերն աշխատում են երեք-չորս գնահատողների հետ, ում իրենք վստահում են եւ, որպես կանոն, այդ գնահատողները շատ ցածր են գնահատում գույքը: Իսկ շուկայում կան այլ գնահատողներ, որոնք տալիս են որակապես այլ գնահատական: Հիմա մեր առջեւ խնդիր է դրված, որ հասկանանք՝ ինչ է կատարվում այս բնագավառում, եւ ինչպես այս խնդիրը լուծենք: Մի կողմից՝ երեւի առեւտրային բանկերը չպետք է աշխատեն միայն մեկ-երկու գնահատողի հետ, այսինքն՝ եթե շուկայում կան տասնյակ գնահատողներ, եթե նրանք միայն մեկ-երկուսի հետ են աշխատում, ապա արդեն որոշակի շուկայական շեղում է կատարվում. մրցակցություն չկա, եւ գնահատման օբյեկտիվությունն էլ կորչում է, որովհետեւ առեւտրային բանկն ի սկզբանե պահանջ է դնում, որ շատ խիստ գնահատվի, որպեսզի ռիսկերը նվազեցվեն: Բայց, մյուս կողմից, տնտեսվարող սուբյեկտների շահերն են ոտնահարվում, որովհետեւ նաեւ մենք շուկայում հստակ պատկերացում չենք ունենում, թե անշարժ գույքի շուկայական գինն ինչպիսին է: Հիմա այս խնդիրն արձանագրվել է, եւ պետք է կարողանանք լուծում գտնել»:

Դիմելով տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանին՝ վարչապետն առաջարկեց ուսումնասիրել՝ «կա՞ մրցակցություն, թե՞ այդտեղ կան ինչ-որ պայմանավորվածություններ, որոնք խաթարում են շուկայի բնականոն զարգացումը»:

Այս հարցը ներկայացնող անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահ **Երվանդ Զախարյանն** ասաց, որ վարչապետի բարձրացրած հարցի առնչությամբ կարվեն առաջարկներ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Բողոքում էին «Փիրդուսնոցի» բնակիչները

«Գերակա շահի զոհեր» պաստառով երեկ կառավարության շենքի առջեւ բողոքի ցույցի էին դուրս եկել Երեւանի 33-րդ թաղամասի կամ այսպես կոչված «Ֆիրդուսնոցի» բնակիչները: Նրանք նշում էին, որ իրենց բնակարանները գտնվում են գերակա շահ ճանաչված տարածքում, որի կառուցապատող «Գլենդել Հիլզ» ընկերությունը չի կատարում պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Մասնավորապես, նրանց տեղեկացմամբ, ընկերությունը պետք է բնակիչներին նոր բնակարաններով ապահովեր 3 տարվա ընթացքում, բայց արդեն անցել է 5 տարի, իսկ իրենք բնակարաններ չեն ստացել:

Այս անգամ եւս ցույցի մասնակիցների հետ զրուցեց կառավարության նամակների եւ քաղաքացիների ընդունելության վարչության պետ Ալեքսանդր Ղազարյանը, որը բնակիչներին հայտնեց, որ 33-րդ թաղամասի բնակիչների բնակարանային խնդիրների առնչությամբ վարչապետի հանձնարարականով ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով: Նրա հաղորդմամբ, հանձնաժողովը կուսումնասիրի հարցը եւ տասնհինգօրյա ժամկետում կներկայացնի ուսումնասիրության արդյունքները:

Ա. Ս.

# Բարելավումներ սահմանային անցակետերում

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի նախագահությամբ երեկ տեղի է ունեցել Հայաստանի սահմանային անվտանգության ապահովմանն ու պետական սահմանի համալիր կառավարմանն ուղղված ծրագրերի կատարման ընթացքը դիտարկող նիստ: Միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկվել են Հայաստանում սահմանային ենթակառուցվածքների արդիականացման համապարփակ գործընթացի վերջին զարգացումները:

Ա. Բաղդասարյանի խոսքով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանի ողջ երկայնքով իրականացվող միջոցառումներն էլ ավելի կբարձրացնեն ու կամրապնդեն Հայաստանի սահմանային անվտանգությունը, բացի դրանից՝ ծրագրի լիարժեք իրագործումը կնվազեցնի կոռուպցիոն ռիսկերը ու կվերացնի բյուրոկրատական քաշքշուկներն ու ավելորդ թղթատարությունը:

ԱՀԱԶԱՆԳ

# Մարցագետում ձկան պաշարները վերացել են

## *Պատճառը Սեյրան Դարբինյանին պատկանող ՀԷԿ-ն է*



Դեբեդ գետի Մարցագետ վտակի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանը շահագործման է հանձնվել նախորդ գարնանը: Նախատեսված էր, որ գետի վերին հոսանքներից ՀԷԿ-ի շահագործման համար պետք է վերցնեին ջրի ծավալի 70 տոկոսը, սակայն, ըստ Լոռու մարզից մեզ հասած տեղեկությունների, այս պահի դրությամբ գետով գրեթե ջուր չի հոսում:

Լոռու մարզի Մարց գյուղի բնակիչ **Նարեկ Հովհաննիսյանի** ներկայացմամբ՝ էկոհամակարգի խախտման հետեւանքով դադարել է կարմրախայտ եւ մուրծի ձկնատեսակների ձվադրման տեղաշարժը:

«Բնապահպանության նախարարության անգործունյա լինելու, համատարած բարձիթողի վիճակի հետեւանքով մի քանի տարի առաջ մեկ այլ ՀԷԿ-ի կառուցմամբ, ցամաքեց Դսեղի ձորում գտնվող Չոչանի ջրվեժը: Գետի վերին հոսանքներում կառուցվում է նոր ՀԷԿ, որի պատճառով գետի 5-6 կմ հատված վերածվել է ծանծաղուտի», ասաց Նարեկ Հովհաննիսյանը՝ հավելելով, որ փոքր ՀԷԿ-ը կառուցվել է առանց թույլտվության: «Փաստաթղթեր չեն ներկայացվել բնապահպանության նախարարության բնապահպանական փորձաքննություն, ինչի մասին նախարարությունը հայտնել է 2012 թ. մայիսին: Չնայած ահազանգին՝ նախարարությունն այդպես էլ տեսչական ստուգումներ չանցկացրեց անօրինական ՀԷԿ-ում: ՀԷԿ-ը շահագործում է «Արգիշտի 1» ընկերությունը, որը գրանցված է Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանի եղբոր՝ Սեյրան Դարբինյանի անունով», ասաց Նարեկը:

Հ. Հ.

# Տաքսիների վարորդները պահանջում են թողնել դեղին համարանիշները

Տաքսիների դեղին համարանիշները ստիկերներով փոխարինելը առաջացրել է վարորդների դժգոհությունը այն պատճառով, որ դեղին համարանիշներ շատերն արդեն վերցրել են, բայց հիմա ստիպված պետք է լինեն գումար վճարել նոր համարանիշների ու ստիկերների (կպչուն կտրոնների) համար: Ստիկերները պետք է փակցվեն մեքենայի հետեւի ապակուն:

Վարորդների միության նախագահ Տիգրան Հովհաննիսյանը, որը երեկ «Արմաս» ակումբի հյուրն էր, այդպես էլ չկարողացավ բացատրել ու համոզել ներկաներին, թե ինչ սարսափելի բան կա դեղին համարանիշները փոխելու մեջ: Թեեւ փոփոխության շնորհիվ լիցենզավորման գումարը կպակասի 17 հազար դրամով, սակայն Տիգրան Հովհաննիսյանը մտահոգություն է հայտնում, թե հետո ավելի մեծ պարտականություններ կդրվեն վարորդների վրա: Թե ի՞նչ պարտականություններ՝ Տիգրան Հովհաննիսյանը չի ասում:

Օրենսդրական նախաձեռնությունը նախատեսում է, որ համարանիշների հատկացման 12 հազար դրամ պետական տուրքը եւ հաշվառման գործողության համար վճարվող 5 հազար դրամը կվերացվեն:

Իսկ ավելի շատ պարտականությունների մասին, ինչպես հասկացվեց, դեռ խոսք չկա: Մտահոգությունն այն է, որ տաքսի ծառայությունները գուցե կորցնեն իրենց վարորդներին, բայց մյուս դեպքում առանց դրա էլ, եթե վարորդն ուզում է չաշխատել ծառայությունում, այլ առանձին աշխատել, կարողանում է դա անել: Տիգրան Հովհաննիսյանը կողմ է, որ բոլորն էլ կարողանան տաքսի վարել, քանի որ աղքատությունը հաղթահարելու խնդիր ունենք, բայց գոնե պահպանվեն բուժզննման, տեխզննման չափանիշները: Ըստ Տիգրան Հովհաննիսյանի՝ վարորդների բուժզննումն ու մեքենաների տեխզննումը այսօր ձեւականորեն են արվում, ու ստացված չափանիշները ձեւական են: Մյուս կողմից էլ՝ Տիգրան Հովհաննիսյանը նշում է, որ զուտ ստիկերներով ամեն մարդ կկարողանա տաքսի վարել, իսկ դա պարզապես անհեթեթություն է:

Վարորդների միության նախագահի կարծիքով՝ դեղին համարանիշները ստիկերներով փոխարինելը պետք է լինի կամավոր, ոչ թե պարտադիր:

Հիշեցնենք, որ կառավարությունը մշակել է օրենսդրական նախաձեռնություն, որով նախատեսում է բոլոր տաքսիների դեղին համարանիշները փոխարինել ստիկերներով:

Տիգրան Հովհաննիսյանը վարորդների շահերը պաշտպանելուց բացի՝ նրանց անբարեխիղճ աշխատաձեւից եւս խոսեց, հատկապես հաշվիչների հետ կապված: Ըստ նրա՝ պետք է սահմանվի նստելավարձ, իսկ հաշվիչները ստուգվեն, լինեն վերահսկողություն ու թեժ գծի հեռախոսահամար, որին սպառողները կարողանան զանգել ու ներկայացնել տաքսիների խախտումները: Օրինակ՝ ամեն կիլոմետրի համար տաքսիների վարորդները վերցնում են 100 դրամից ավելի, քանի որ հաշվիչն աշխատում է հօգուտ վարորդների: Եվ այս խախտումներով տաքսու վարորդներն ամենեւին մտահոգված չեն, իսկ միայն համարանիշները փոխելը դժգոհության տեղիք է տվել:

Տիգրան Հովհաննիսյանը նաեւ չի բացառում, որ փոփոխությունից հետո դարձյալ կլինեն վարորդներ, որոնք կշարունակեն աշխատել խուսափելով հարկային դաշտից:

Ի. Պ.

*Հ. Գ. Այսօր՝ ժամը 11-ին տաքսիների վարորդները Էրեբունի թանգարանի մերձակա հրապարակում կազմակերպելու են բողոքի ցույց՝ պահանջելով փոխել դեղին համարանիշները վերացնելու որոշումը:*

ԱԶԳ

## Որոնում

# Թե ինչպես կորուսվի փախած միլիարդատերերի ճակատագիրը



Աբլյազով



Խրապունով

Եթե եզրակացություններ անենք հեռուստաֆիլմերից եւ մամուլի հրապարակումներից, Ինտերպոլը քրեական ոստիկանության հզոր միջազգային կազմակերպություն է, որից ոչ ոք չի կարող թաքնվել ո՛չ Անգլիայում, ո՛չ էլ Անտարկտիդայում: Չէինք ուզենա վիճարկել այս փաստը, սակայն վերջին շրջանում ակամա ստեղծվում է հարգարժան միջազգային ոստիկանների անսկզբունքայնության կամ անկարողության մի տպավորություն, երբ խոսքը հանցագործների հատուկ տեսակի՝ հանցագործ քաղաքական գործիչների մասին է:

Միջազգային հանցավորությունը մի սողանցք է գտել, այսպես ասած՝ մի ճաք պողպատե վահանի մեջ, եւ այսօր զանազան գողեր ու ավազակներ, մարդասպաններ եւ այլ հանցագործներ կարող են խուսափել պատասխանատվությունից, միայն ներկայանալով, ասենք, իբրեւ որեւէ Բոթսվանայի ընդդիմություն եւ բարձրաձայն հայտարարել մարդկային իրավունքների ոտնահարման մասին, միաժամանակ հռչակելով մինչեւ վերջ պայքարելու իրենց մտադրությունը: Թե իրականում ինչ իրավունքներ են ոտնահարված, գողության կամ սպանության իրավունքը, լռում են: Իսկ այն, որ այդ, ներողություն արտահայտության համար, ժողովրդավարները պատրաստվում են պայքարել իրենց երկրների օրինական ընտրված իշխանությունների դեմ, բոլորովին էլ փաստ չէ, ասենք, նշանակություն չունի: Որովհետեւ հիստերիան, որը ծավալվել է աշխարհում նոր ժողովրդավարական կենսակերպի ամբողջական ներդրման շուրջը, հասել է այժմ իր գագաթնակետին:

Երեւի բավական է դատարկ խոսել, այժմ անցնենք փաստերին:

Ինտերպոլը ցույց է տվել իր անկարողությունը բազմաթիվ իրավիճակներում, չկարողանալով բռնել շատ հանցագործների շլնքից, ովքեր ապաստանել են Եվրոպայում, ներգաղթելով հին աշխարհի ամենատարբեր պետություններից: Օրինակ՝ Ղազախստանից, հետախուզվող Աբլյազովն ու Խրապունովը եւ էլի ուրիշ պարոններ ոչ թե խոր ընդհատակ են անցել, այլ հանգրվանել են Եվրոպայում: Նրանք հանգիստ կարող են ձերբակալվել, եթե լինի մեծ ցանկություն: Բայց ցանկություն կարծես թե չկա: Օրինակ, բոլորը հիանալի հասկանում են, որտեղ է հանգրվանել միլիոնատեր Խրապունովը, երբ բավական է միայն բացել նրա անձնական կայքը ինտերնետում՝ իմանալու համար նրա հասցեն: Աբլյազովը նույնպես աշխույժ քաղաքական կենսակերպ է վարում, իր քաղաքական նկրտումները իրականացնելով: Համենայն դեպս, լրագրողները հեշտորեն դուրս են գալիս նրանց հետ շփման, ի տարբերություն, օրինակ, ոստիկանների: Այնինչ այդ անձնավորությանը այժմ փնտրում են Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ղազախստանի, Ուկրաինայի իրավապահ մարմինները: Եթե նրա հանցակազմերը գումարենք իրար եւ փոխանցենք ազատազրկման ժամկետների, կարելի կլինի ասել, որ այդքան պարզապես չեն ապրում: Ահա եւ պարոն Աբլյազովը չի շտապում ճաշակել ազատազրկման հյուրընկալությունը, իսկ պարոնայք ոստիկանները առայժմ չեն շտապում նրան ձեռնաշղթաներ հագցնել:

Փոխարենը՝ մամուլի հետ նա հին բարեկամական հարաբերություններ ունի: «Ռոյթերին» տված մի հարցազրույցում պարոն Աբլյազովը հայտարարել է, որ կդներ իր թեկնածությունը Ղազախստանի ընտրություններում, եթե այնտեղ փոխվեր իշխանությունը: Պարոն Աբլյազովը միայն մոռացել է հիշատակել իշխանափոխության մասին նաեւ այն երկրներում, որտեղ նրան փնտրում են:

Ընդհանրապես այս մարդու կյանքի ուղին դեռ կմտնի պատմության հիշատակարաններ, որպես ամենահաջողակ խաբեբայի: Նա սկսել է իբրեւ մանր գործարար, սակայն շուտով հասել է Ղազախստանում բարձր պաշտոնների: Նորանկախ պետության կայացման եւ սեփականության վերաբաշխման շրջանում նա կեղտոտել է իր ձեռքերը անօրինական մեքենայությունների մեջ եւ հասկանալով իրավապահների առջեւ իր խոցելիությունները՝ զինակիցների հետ կուսակցություն է ստեղծել իր կապիտալների պաշտպանության համար: Պաշտպանվել, ճիշտ է, չի հաջողվել, քանի որ օրենքի առաջ բոլորը հավասար են: Չի օգնել նաեւ դեմոկրատ չինովնիկի կրկնակի իմունիտետը: Աբլյազովին բանտարկել են: Սակայն շուտով ազատվել է: Ահա խնդրեմ, արդյոք խիստ, ինչպես այսօր Աբլյազովն է գրում, ավտորիտար վարչակարգը ազատ բաց չթողնի՞ քաղաքական գործչի, ընդդիմադիրի եւ գլխավոր հակառակորդի, ումից արժեր լրջորեն զգուշանալ: Ոչ, իհարկե ոչ: Նշանակում է, կամ Ղազախստանում ռեժիմը բոլորովին էլ ավտորիտար չէ, կամ Աբլյազովը, որպես քաղաքական գործիչ, բոլորովին զրո է: Սա է ճշմարտությունը:

Իհարկե, նրան իզուր ազատ արձակեցին: Եվ ոչ թե այն պատճառով, որ նա երդվյալ ընդդիմախոս է, չբացահայտված ավազակ, ով, միեւնույն է, մի օր շրջվելու է դեպի ծուռ ճանապարհներ:

Եվ ահա այդպիսի մարդուն, պատկերացրեք, վստահեցին գլխավորել մի բանկ, որը նա բարեհաջող կերպով քանդեց եւ թալանեց, օֆշորայինների միջոցով իր կողմից վերահսկվող ձեռնարկություններով դուրս բերեց միլիարդավոր դոլարներ: Նա ընդհանուր առմամբ թռցրեց ավելի քան հինգ միլիարդ դոլար: Տարբեր հարցազրույցներում բացասելով պատահածը՝ Աբլյազովը դրան պատասխանել է այսպես. իբր իր գործողությունները չեն համարվում գողություն, քանի որ բանկը սեփական է, եւ դա նույնն է, ինչ փողերը մի գրպանից մյուսը տեղափոխելը: Ճիշտ է հետագայում պարզվեց, որ նա իր գրպաններն էր դնում ոչ միայն իր փողերը: Դրանք բնակչության ավանդներն էին: Նաեւ արտասահմանյան բանկերի փոխառու միջոցներն էին: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի բանկերը Աբլյազովի բանկին տվեցին ծավալով շատ մեծ փոխառու միջոցներ. ստացվում է, որ այդ պարոնը թալանել է նաեւ իր անգլիացի գործընկերներին: Ըստ որում՝ նրա լկտիությունը բավարարել է, որ քաղաքական ապաստան խնդրի հատկապես Անգլիայում: Եվ ահա բոլորովին պարադոքսալ է թվում այն փաստը, որ գողացող բանկիրի եւ նախկին պաշտոնյայի այդ շատ համեստ խնդրանքը այնտեղ բավարարել են: Քանի Ռուսաստանում եւ նրա հայրենի Ղազախստանում իրավապահ մարմինները քանդում էին այդ խճճված ֆինանսական մեքենայությունների կծիկները, այդ պարոնը զբաղվեց այն բանով, ինչ կարող է անել ամենից լավ՝ «թոզ ու դուման անել»: Նա իրեն հռչակեց քաղաքական փախստական, պատմեց մի արտաճմլիկ պատմություն, թե ինչպես իշխանությունները փորձեցին խլել իր բիզնեսը եւ ինչպես հերոսական (նույն օֆշորայինների) միջոցներով նա դրանք փրկեց: Հաշվի չառավ պարոն Աբլյազովը միայն մի բան: Որ անգլիական բանկիրները նույնպես ֆինանսական հետաքրքրություններ ունեն եւ թքած ունեն այդ սուտ պատմությունների վրա: Փախստականի դեմ հարուցվեց քաղաքացիական գործ՝ պահանջելով վերադարձնել միջոցները: Նա առավելագույնս իրեն հեռու պահեց քաղաքականությունից, եւ այդ պատճառով հաջողակ դուրս եկավ: Հենց այդ շրջանակներում էլ անգլիական արդարադատությունը պարոն Աբլյազովին ազատազրկման մի կլորիկ ժամկետի դատապարտեց: Աբլյազովը փախավ Անգլիայից եվրոպական երկրներից մեկը: Օլիգարխի լոնդոնյան փառահեղ տունը, ինը ննջարաններով, «միլիարդատերերի փողոցում», այժմ դատարկ է, ինչպես եւ հարյուր ակր տարածքով հողամասը Անգլիայի գյուղական մի շրջանում: Այդ ակտիվները, ինչպես եւ հարյուրավոր ուրիշները, Լոնդոնի բարձր դատարանը սառեցրեց:

Սակայն դա չի խանգարում Աբլյազովին շարունակել գտնվել ազատության մեջ: Գողացված փողերը դեռ երկար կբավականացնեն, իսկ Ինտերպոլը, դատելով այս ամենից, նրան ձերբակալել դեռեւս չի շտապում: Ահա եւ ստեղծվել է տպավորություն, թե հանցագործին պարզապես խնդրել են առայժմ չերեւալ Անգլիայում, որը քննադատության է ենթարկվում փախած հանցագործներին հովանավորելու համար, կորչել ինչ-որ տեղ, իջնել ջրի հատակը: Ոչ ոք չգիտե, թե որտեղ է Աբլյազովը, ահա եւ նշանակում է, որ ոչ մեկին մեղադրել չի կարելի: Միակը, ով պատասխան կտա դրա համար, Ինտերպոլի ոստիկաններն են, ովքեր ստիպված են կուլ տալ սեփական մասնագիտական անգործության մասին մեղադրանքները: Ահա այդպիսին է այժմ, կարծես, քաղաքականությունը Եվրոպայում:

Ինչպես երեւում է, ժամանակի ընթացքում՝ ոչինչ չի փոխվում: Ակտիվում մեծ գումարների առկայության եւ հզոր կապերի շնորհիվ արդարադատությունից կարելի է եւ չվախենալ, որովհետեւ այն ձեռքով-ոտքով կապել են տարբեր տեսակի վայ-գործարարները, վայ-քաղաքական գործիչները, պատվով ու խղճով առուծախ անողները:

ՌՈՒԴՈԼՖ ԱՎԱԳԻՄՅԱՆ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

# Այլիսլիի «Քարե երազները»՝ Ադրբեջանի բարոմետր

**Մարտի 10-ին, ժամը 23.05-ին գերմանական ARD-ն իր մշակութային հայտնի ttt-(titel thesen temperamente) հաղորդման շրջանակներում անդրադարձավ ադրբեջանցի գրող Աքրամ Այլիսլիի դեմ սկսված հալածանքին: Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խոր ատելություն կա, դրա չափը ցույց է տալիս «Քարե երազներ» վիպակից հետո գրողի դեմ սկսված արշավը, ծանուցում է գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ որպես աղբյուր ներկայացնելով WDR-ի պատրաստած տեսանյութը: Հաղորդման սկզբում հիշատակվում է Բաքվում անցած տարի կայացած «Եվրոտեսիլ» երգի մրցույթը, հպանցիկ նկարագրում դրանից տասնամյակներ առաջ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ Լեռնային Ղարաբաղի շուրջը հակամարտությունը:**

**«Նրան սպառնում են, նրա գրքերը հրո ճարակ դարձնում, գլխագին են սահմանել: Աքրամ Այլիսլին իր վիպակում շոշափում է Հայաստանի հետ առկա հակամարտության տասնամյակների տաբուն»: ARD-ի եթերում Այլիսլիի գրքերն այրելու ծանոթ պատկերներն են: Հարցազրույցում գրողն իր գրքերն այրելու փաստը համեմատում է Գերմանիայում նացիստների արարքի հետ: «Այսպիսի բան երբեւէ չէր եղել, դեռ հեռուստատեսությունն էլ ցուցադրում է, սարսափելի է», գանգատվում է գրողը: «Արտաքուստ Ադրբեջանն աշխարհին է ներկայանում իբրեւ բաց երկիր, ներքուստ այն ավտորիտար Իլհամ Ալիեւն է կառավարում, որ թույլ չի տալիս հայերի հակամարտության տրավմայի մասին որեւէ բանավեճ: Բաքվի հայկական եկեղեցին հիշեցնում է, թե 20 տարի առաջ այստեղ 200 000 հայ էր ապրում: ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պատերազմ է բռնկվում: Բոլոր ադրբեջանցիները Հայաստանից արտաքսվում են, Ղարաբաղի Խոջալու գյուղում հայերը մի քանի հարյուր ադրբեջանցիների սպանեցին, ողջ մնացածները պիտի փախուստի դիմեին: Դարեր ի վեր կողք կողքի խաղաղ ապրած հարեւաններ են: Խոջալուի այս կոտորածի ( բնագրում՝ Massaker-ԱՆ. Հ.) մասին Բաքվում մի հուշարձան է հիշեցնում, Ադրբեջանի քաղաքականության հիմնական սլաքը 30 տարի ի վեր հայերի հանդեպ ատելությունն է: «Հենց դրա մասին է իմ գիրքը, պատմում է Այլիսլին, նրանք, որ Հայաստանից Բաքու էին տեղահանվել, պիտի իրենց վրեժը մի ծեր հայից առնեին, իմ գրքի հերոսը մի ադրբեջանցի է, որ ապարդյուն փորձում է հային օգնել, մեղադրելով ադրբեջանցիներին, թե ոճրագործությունը նրանք են սկսել», լրացնում է ադրբեջանցի գրողը: Դրանով Այլիսլին պատմական այն ճշմարտությունն է ներկայացնում, որը տասնամյակներ շարունակ ադրբեջանցիները վանում են:**

**Ադրբեջանցիների՝ Հայաստանից արտաքսումից հետո հարյուրհազարավորները Բաքվում հայերի հանդեպ վրեժի էին կոչում: Հարյուրավորները սպանվեցին, կենդանի մնացածները Բաքվից տարհանվեցին նավերով: Երկու պետությունների հիմնադրումից ի վեր քաղաքական ուժերը թշնամանք են տարածում հարեւանի հանդեպ: «Հեռուստատեսությունը, մանուկների գրքերը ատելությունն են խթանում, չկա խելամիտ երկխոսություն, սա երկու երկրների քաղաքականությունն է, դրանից երկուսի իշխանություններն էլ շահում են», կարծիք է հայտնում իրավապաշտպան Էմին Միլլին: Աքրամ Այլիսլիի հանդեպ ազգայնական խառնամբոխի վարքագծի մասին կարծիք է հայտնում նախագահի խորհրդական Ֆուադ Ախունդովը:**

Տես էջ 5

# Ֆրանցիսկ պապի գահակալությունը տեղի կունենա մարտի 19-ին

*Նրա առաջնահերթ խնդիրները հայտնի են*



Երեկ համայն աշխարհի լրատվամիջոցները (այդ թվում՝ «**Ազգը**») հաղորդեցին, որ մարտի 13-ի ուշ երեկոյան Կաթոլիկ եկեղեցու նոր հովվապետ է ընտրվել Բուենոս Այրեսի 76-ամյա արքեպիսկոպոս Խորխե Մարիո Բերգոլիոն, որն ընտրվելուց հետո ընդունել է Ֆրանցիսկ անունը: Ի դեպ, նախապես նա աշխարհին ներկայացվել էր իբրեւ Ֆրանցիսկ Ա, սակայն ավելի ուշ Վատիկանը պաշտոնապես պարզաբանել էր, որ նորընտիր պապի անունը Ֆրանցիսկ է, նա Ֆրանցիսկ Ա կանվանակոչվի Ֆրանցիսկ Բ-ի հայտնվելուց հետո միայն:

Վատիկանի մամլո քարտուղար Ֆեդերիկո Լոմբարդին արդեն հայտարարել է, որ Ֆրանցիսկ պապի գահակալման արարողությունը տեղի կունենա մարտի 19-ին:

Գահակալման արարողությանը ներկա կլինեն բազմաթիվ երկրների պատվիրակություններ: Ռոյթեր գործակալությունը տեղեկացնում է, որ ԱՄՆ պատվիրակությունը գլխավորելու է փոխնախագահ Ջո Բայդենը:

Խորխե Մարիո Բերգոլիոն Հռոմի պապ ընտրված առաջին լատինամերիկյան հոգեւորականն է եւ Ճիզվիտական ուխտի առաջին ներկայացուցիչը: Մեկնաբանները նշում են, որ պապական անվան ընտրությունը սովորաբար պատկերացում է տալիս նոր հովվապետի ծրագրերի մասին: Ենթադրվում է, որ աղքատությամբ ու ժուժկալությամբ հայտնի Ֆրանցիսկյան ուխտի հիմնադիր սուրբ Ֆրանցիսկ Ասիզացու պատվին անվանակոչված Ֆրանցիսկ պապը Կաթոլիկ եկեղեցում կիրականացնի նշանակալի բարեփոխումներ:

Ընտրվելուց անմիջապես հետո Սուրբ Պետրոսի հրապարակում հավաքված բյուրավոր հավատացյալներին դիմելով՝ Հռոմի պապը քրիստոնյաներին խնդրեց իր համար հայցել Բարձրյալի օրհնությունը, ինչպես նաեւ աղոթել իր նախորդի՝ Բենեդիկտոս 16-րդի համար:

Բենեդիկտոս 16-րդ պապը գահից հրաժարվել էր փետրվարի 11-ին, իսկ փետրվարի 28-ին պաշտոնապես վայր էր դրել լիազորությունները եւ հեռացել էր Վատիկանից:

Նորընտիր պապը՝ Խորխե Մարիո Բերգոլիոն, ծնվել է 1936 թ. դեկտեմբերի 17-ին Բուենոս Այրեսում, իտալացի տարագրի ընտանիքում: Ճեմարանում ուսումն ավարտելուց հետո 1958-ին ընդունվել է Ճիզվիտական ուխտ: Ուսումնասիրել է փիլիսոփայություն, դասավանդել է Սանտա Ֆեի Colegio de la Inmaculada-ում եւ Բուենոս Այրեսի Colegio del Salvador-ում: 1969-ին ձեռնադրվել է իբրեւ հոգեւորական:

1973-1979 թթ. եղել է Արգենտինայում Ճիզվիտական ուխտի առաջնորդը: 1980-1986 թթ. զբաղեցրել է Սան-Միգելի ճեմարանի ռեկտորի պաշտոնը: Դոկտորական թեզի վրա աշխատանքն ավարտել է Գերմանիայում եւ վերադարձել է Արգենտինա, ծառայել Կորդոբայում: 2001-ին Հռոմի Հովհաննես-Պողոս Բ պապը նրան ձեռնադրել է կարդինալ: Որոշ տեղեկությունների համաձայն, 2005 թ. պապական ընտրություններում Բերգոլիոն քվեարկության ժամանակ գրավել է երրորդ տեղը, իսկ պապ ընտրվել է Յոզեֆ Ռացինգերը կամ Բենեդիկտոս 16-րդը:

Նորընտիր Ֆրանցիսկ պապը աղքատ ընտանիքի զավակ է եւ հայտնի է իր համեստ ու ժուժկալ ապրելակերպով: «Ֆիգարո» թերթը մանրամասնում է, որ նա մշտապես կարողացել է «լսել աղքատներին»: Իր ասկետական կենսակերպից բացի, պապը հայտնի է պահպանողական հայացքներով եւ միասեռական ամուսնությունների խիստ քննադատությամբ: Նա քանիցս հանդես է եկել վիժեցումների եւ էվթանազիայի դեմ:

Լոնդոնի «Գարդիան» թերթը ընդգծում է, որ հավատացյալները Կաթոլիկ եկեղեցու նոր հովվապետից առաջին հերթին ակնկալում են վերափոխումներ: Բենեդիկտոս 16-ի գահակալության 8 տարիներին խնդիրներն ու սկանդալները բառացիորեն հետապնդում էին Կաթոլիկ եկեղեցուն: Հիմա հավատացյալները հույս ունեն, որ Ֆրանցիսկ պապը կկարողանա բարելավել իրավիճակը: Նոր պապի առջեւ ծառացած առաջնահերթ խնդիրներն են կաթոլիկ հոգեւորականների հետ կապված սեքսուալ սկանդալների հաղթահարումը եւ Վատիկանի ֆինանսական համակարգի բարեփոխումը: Բացի դրանից, չպետք է անուշադրության մասնի եկեղեցական կանոններն ավելի ազատ մեկնաբանելու բազմաթիվ կաթոլիկների պահանջները:

Պ. Ք.

*ՊԵԿԻՆ*

# Սի Ցզինպինը պաշտոնապես դարձավ ՉԺՀ նախագահ



**Ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովը մարտի 14-ին ՉԺՀ նոր նախագահ է ընտրել Սի Ցզինպինին: Ֆրանսպրես գործակալությունը նշում է, որ նա նաեւ Կենտրոնական ռազմական խորհրդի ղեկավարն է: Այդ պաշտոններում նա կփոխարինի Հու Ցզինտաոյին, որը երկրի ղեկավարն էր վերջին 10 տարիներին:**

**Չինաստանի սահմանադրության համաձայն, Կենտրոնական ռազմական խորհրդի նախագահը երկրի զինված ուժերի գլխավոր հրամանատարն է: 2012-ի նոյեմբերին ՉԿԿ կենտկոմի պլենումի ժամանակ Սի Ցզինպինը ընտրվել էր կենտկոմի գլխավոր քարտուղար եւ Բարձրագույն զինվորական խորհրդի նախագահ: Այսպիսով, ներկայումս նա ՉԺՀ-ում զբաղեցնում է բոլոր չորս գլխավոր պաշտոնները եւ իր ձեռքին կենտրոնացրել է կուսակցական, պետական ու զինվորական ղեկավարությունները:**

**Անցյալում Չինաստանի ղեկավարության սերնդափոխության ժամանակ Կենտրոնական ռազմական խորհրդի նախագահի պաշտոնում մեկ տարի մնում էր ՉԺՀ արդեն նախկին նախագահը:**

**Սի Ցզինպինը ՉԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղարի եւ ՉԺՀ նախագահի պաշտոններում Հու Ցզինտաոյին կփոխարինի որպես ղեկավարների «հինգերորդ սերնդի» ներկայացուցիչ: Այդ սերունդը երկիրը կղեկավարի առաջիկա 10 տարիներին:**

**«Հինգերորդ սերնդի» ներկայացուցիչ է նաեւ Չժան Դեցզյանը, որը մարտի 14-ին ընտրվեց ժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի Մշտական կոմիտեի նախագահի պաշտոնում: Դա համապատասխանում է մյուս երկրների խորհրդարանի նախագահի պաշտոնին:**

**Ղեկավարների սերնդափոխության շրջանակներում ՉԺՀ վարչապետի պաշտոնը կզբաղեցնի Լի Կեցյանը, փոխարինելով Վեն Ցզյաբաոյին:**

# Ուգո Չավեսի մարմինը չեն զմռսելու

**Վենեսուելայի իշխանությունները հայտարարել են, որ հանգուցյալ նախագահ Ուգո Չավեսի մարմինը զմռսելու եւ դամբարանում տեղադրելու գաղափարից, ամենայն հավանականությամբ, հարկ կլինի հրաժարվել: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը:**

**«Ռուսաստանից եւ Գերմանիայից հրավիրված մասնագետները հայտնեցին, որ զմռսումը չափազանց դժվար կլինի, քանի որ այդ գործընթացը անհրաժեշտ էր սկսել ավելի վաղ», հեռուստաեթերում հայտարարել է Վենեսուելայի նախագահի պաշտոնակատար Նիկոլաս Մադուրոն:**

**Նա չի մանրամասնել, թե զմռսումից հրաժարվելու վերաբերյալ վերջնական որոշում ընդունվե՞լ է արդյոք: Սակայն Վենեսուելայի կառավարության անանուն աղբյուրները Ռոյթերի թղթակցին հայտնել են, որ Չավեսի մարմինը պահպանելու փորձը ձախողվել է եւ որ իշխանությունները մոտ օրերս պաշտոնապես կհայտարարեն նախագահի աճյունը դամբարանում տեղադրելու մտադրությունից իրենց հրաժարման մասին:**

**Վենեսուելան 14 տարի ղեկավարած Ուգո Չավեսը մարտի 5-ին մահացել էր ծանր ու երկարատեւ հիվանդությունից հետո: Սկզբում հայտարարվել էր, թե նրա հուղարկավորությունը տեղի կունենա մարտի 8-ին, բայց հետո երկրի իշխանություններն ասել էին, թե մտադիր են զմռսել նախագահի մարմինը եւ տեղադրել դամբարանում:**

# Այլիսլիի «Քարե երազները»՝ Ադրբեջանի բարոմետր

*ARD-ի եթերում հայերն ու ադրբեջանցիները հավասարվեցին*

*4-րդ էջից*

**«Ես էլ եմ դատապարտում Այլիսլիի հանդեպ անկարգությունները, ասում է նա, բայց գրողը գիտեր՝ ինչ էր անում: Մենք պատերազմի մեջ ենք, իսկ նա ադրբեջանցիներին սադրում է իր գրքով: Պատասխանը նրան չպիտի զարմացներ»: Այլիսլին գրքում պատմում է իր ծննդավայրի մասին, ուր հայերն ու ադրբեջանցիներն ապրում էին խաղաղ: Բայց գրողի գրչընկերներն էլ խաղաղության մասին նրա երազանքն ընկալում են որպես պատերազմի կոչ: «Իբրեւ PEN-ի նախագահ ենթադրելի է, որ պիտի սատարեմ Այլիսլիին, բայց ըմբռնում եմ մեր նախագահի՝ Այլիսլիին ժողովրդական գրողի պատվո կոչումից զրկելու որոշումը, պարզաբանում է PEN-ի Ադրբեջանի ներկայացուցիչ Չինգիզ Աբդուլաեւը հավելելով՝ նրա գիրքն ադրբեջանցիների դեմ է: «Սա արվեստի գործ է, քաղաքական գրություն չէ, մեր սահմանադրությունը երաշխավորում է ազատ խոսքը: Իմ գիրքը բարոյականության եւ մարդկայնության մասին է, մեկնաբանում է Այլիսլին, սա իմ համերկրացիներին ուղղված կոչ է՝ ճանաչելու պատմական ճշմարտությունը»:**

**Այլիսլին միակը չէ, որ երկրում մարդու իրավունքների, ժողովրդավարության ճանաչման պահանջն ունի: Ոստիկանությունն անպատիժ է թողնում է Այլիսլիի դեմ ազգայնականների հալածարշավը, իսկ միապես նախագահի դեմ խաղաղ ցույցի մասնակիցներին խոշտանգում: Հանուն ժողովրդավարության շարժումը գնալով ընդլայնվում է, թեպետ Այլիսլիի դեմ պայքարը ընդդիմադիրներին վախեցնելու նշան պիտի լիներ: «Իմ հերոսը Գալիլեո Գալիլեյին է նման. նա գիտեր ճշմարիտը, որ երկրագունդը պտտվում է արեւի շուրջը, ուժեղները ճնշում էին, բայց... ճշմարտությունը պիտի հաղթի՝ հայերն ու ադրբեջանցիները պիտի հաշտվեն իրար հետ»: Ադրբեջանը հարեւան հայերի հանդեպ ատելության գերի դարձած, բզկտված երկիր է: Նույնիսկ մի վիպակ իրավունք չունի սեփական մեղքը ողբալով տաբուն շրջանցելու: Այլիսլին երկյուղում է իր կյանքի համար: Ադրբեջանը դեռ երկար ճանապարհ ունի անցնելիք՝ մինչեւ հաշտվի սեփական պատմության հետ, իր հաղորդումն այսպես է եզրափակում Մարկուս Բենսմանը:**

**Նույն հեռուստատեսային հաղորդմանը կից ինտերնետային տպագիր տարբերակն առավել ընդարձակ է: «Սա այն անհատի ողբերգությունն է, որն աշխարհն ամբողջական է ընկալում: Մարդիկ նրա համար մարդ են՝ անկախ ազգային պատկանելիությունից», իր ադրբեջանցի հերոսին է բնութագրում Այլիսլին: «Գրողն իր ստեղծագործության մեջ իր համերկրացիներին չէ, որ դատապարտում է, այլ՝ մի մարդու սպանությունը», պարզաբանում է հրապարակումը: Անդրադառնալով ղարաբաղյան հակամարտության պատմությանը, ինչպես հեռուսահաղորդման մեջ, այնպես էլ այստեղ նկատելի է երկու էթնոսների գործողություններին նույն հավասարեցնող շեշտադրումը՝ երկկողմ տեղահանություններ ու կոտորածներ: «Չնայած 1994-ին Ռուսաստանի միջնորդությամբ կնքված հրադադարին, հակամարտությունը մինչեւ օրս ձգվում է՝ դառնալով երկու ժողովուրդների ազգային գիտակցության էական մաս: Երկու կողմում էլ ատելությունը խոր նստվածք է թողել: Դրա չափը երեւակվում է երկխոսության հրավերի կոչված «Քարե երազներ» գրքի արձագանքից: Բայց Ադրբեջանում այսօրինակ ուղերձը «պահանջարկ» չունի. «Քարոզչությունն առավոտից իրիկուն կրկնում է, թե հայերը վատն են: Նրանք ոչ մշակույթ ունեն, ոչ երաժշտություն, ոչ մի բան չունեն: Երկիրն էլ, որտեղ ապրում են, մեզանից են գողացել: Եվ լույս աշխարհ է գալիս մի գիրք, որտեղ գրված է՝ հայերն էլ մարդ են, նրանց մեջ էլ հրաշալի մարդիկ կան: Ժողովուրդը չի կարողանում ըմբռնել՝ ինչու ամեն օր մի բան ենք լսում, բայց կա մի գրող, որ բոլորովին ուրիշ կերպ է պատմում», Այլիսլիի մեկնաբանությունն է մեջբերում ARD-ի ցուցադրած հաղորդմանը կից հրապարակումը՝ շարունակելով՝ Ադրբեջանում հրատարակիչ չգտած գրական գեղարվեստական ստեղծագործությունը մշակութային ազգայնական վերնախավի, ընդդիմադիրների քննադատությունից էլ չի վրիպում: «Այլիսլիի գրքում ադրբեջանցիները շատ վատ կերպով են ներկայացված: Սա ոչ լավ հարեւանությանը, ոչ էլ հակամարտության լուծմանն է նպաստում», ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության ներկայացուցիչ Իսա Ղամբարի կարծիքն է, որն իհարկե դատապարտում է գրողի դեմ հարձակումները: Իշխանություններն օգտագործում են այս առիթը՝ երկրում առկա խնդիրներից ժողովրդի ուշադրությունը շեղելու նպատակով:**

**«Էխո Բաքու» շաբաթաթերթի լրագրող Նուրանին էլ ըմբռնում է իր համերկրացիների վրդովմունքը: «Գիրքը «կեղծում է» պատմական փաստերը եւ ի ցույց դնում, թե ինչպես են «վատ ադրբեջանցիները լավ հայերին սպանում»»:**

**Վերջին ելքն աքսո՞րն է: Առաջիկա շաբաթներին ռեժիմի պահվածքը ցույց կտա՝ կա՞ ուրիշ ելք: «Փակուղում եմ հայտնվել: Գրել չեմ կարող: Գրելու համար խաղաղ միջավայր է պետք», Այլիսլիի բառերով է եզրափակվում հրապարակումը:**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Գերմանիա

# Սերգեյ Նակարյակովը, Մարիա Մեյերովիչ եւ Ջոն Վիկտորին Յունին մեկ բեմում



Այսօր Արամ Խաչատրյան համերգասրահում ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ համատեղ տեղի կունենա շեփորահար Սերգեյ Նակարյակովի, դաշնակահարուհի Մարիա Մեյերովիչի եւ դիրիժոր Ջոն Վիկտորին Յունիի համերգը:

Ս. Նակարյակովը կկատարի Հայդնի Թավջութակի կոնցերտը փոխադրված շեփորի համար, իսկ Մ. Մեյերովիչի հետ՝ Շոստակովիչի դաշնամուրի, շեփորի եւ լարային նվագախմբի համար կոնցերտը: Համերգի շրջանակում Ֆիլհարմոնիկ նվագախումբը կներկայացնի նաեւ Բրուքների թիվ 3 սիմֆոնիայի հայաստանյան պրեմիերան:

Շեփորահար **Սերգեյ Նակարյակովը**, որը ծնվել է 1977թ-ին Ռուսաստանում, 13 տարեկանից հանրության կողմից անվանվել է շեփորի Պագանինի, իսկ նրա «Էլեգիա» անվանումով CD-ն ունկնդրելուց հետո քննադատներից մեկը նրան անվանեց շեփորի Կառուզո:

Համերգային ծրագրից առաջ երաժիշտները հանդիպեցին լրագրողների հետ, որի ժամանակ Ս. Նակարյակովն ասաց. «Ցավոք, շեփորահարների համար երգացանկը մեծ չէ, սակայն գոհ եմ համերգի համար ընտրված ծրագրից»: Բանախոսն ընդգծեց, որ ամեն անգամ սիրով է գալիս Հայաստան եւ հաճույքով է աշխատում Ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ:

Ի դեպ, 9 տարեկան հասակում ողնաշարի վնասվածքի հետեւանքով ստիպված լինելով թողնել դաշնամուրը, Սերգեյն իրեն նվիրեց շեփորին: Այդ ունակությունը ժառանգելով հորից՝ Միխայիլ Նակարյակովից, Սերգեյը շուտով տիրապետեց շեփորի նվագացանկի կարեւորագույն գործերին: Նա այն հազվադեպ հանդիպող շեփորահարներից է, որը դասական երաժշտությունը մեկնաբանելիս օգտագործել է ֆլյուգելհորնը: Սերգեյը մասնակցել է նաեւ Զալցբուրգի փառատոնին եւ արժանացել «Prix Davidov» մրցանակին: Այդ ժամանակից սկսած, նա ելույթներ է ունեցել շուրջ 25 երկրներում՝ Վլադիմիր Սպիվակովի, Քրիստոֆ Էշենբախի, Յուրի Բաշմետի, Յուրի Տեմիրկանովի, Վլադիմիր Աշկենազիի, Իրժի Բելոհլավեկի, Դմիտրի Սիտկովեցկու, Սըր Նեվիլ Մարիների, Վալերի Գերգիեւի եւ այլոց ղեկավարությամբ:

Իսկ դաշնակահարուհի **Մարիա Մեյերովիչը** ծնվել է Սանկտ Պետերբուրգում, ավարտել կոնսերվատորիան: Ստանալով Մենուհինի «Fonds Alex de Vries»-ի կրթաթոշակը, 1990-ին տեղափոխվում է Բելգիա, որտեղ ավարտում է Անտվերպենի Royal Conservatory-ն: Համագործակցել է անվանի երաժիշտների հետ, ինչպիսիք են՝ Սոնդեցկիսը, Կրեմերը, Հիրշհորնը, Յուրովսկին, Ցուկերմանը, Վաթսը, Վենգերովը եւ այլք: Հատկանշական է, որ հայաստանյան համերգը առաջին համագործակցությունը չէ Սերգեյ Նակարյակովի հետ, նրանք հաճախ են միասին հանդես գալիս համերգային ծրագրերով: Մարիա Մեյերովիչը դասավանդում եւ վարպետության դասընթացներ է անցկացնում ԱՄՆ-ում, Գերմանիայում, Հարավային Աֆրիկայում, Բելգիայում եւ այլուր: Իսկ վերջերս ձայնագրել է «Widmung» CD-ն:

«Հայերը շատ ջերմ ազգ են, ինչպիսին է նաեւ նվագախումբը: Մեծ հաճույքով եմ համագործակցում Ֆիլհարմոնիկի հետ: Հայաստանն իրոք հպարտանալու բաներ ունի», նշում է դաշնակահարուհին:

Իսկ **Ջոնգ Վիկտորին Յուն** առաջին անգամ չէ, որ Հայաստանում է գտնվում եւ համերգով հանդես գալիս մեր պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, այս համերգն արդեն չորրորդ համագործակցությունն է:

Նշենք, որ նա կոմպոզիցիա է սովորել Ջորջ Քրամբի, Ջեյ Ռայսի եւ Ջորջ Ռոխբերգի ղեկավարությամբ Փենսիլվանիայի համալսարանում: Համերգներով հանդես է եկել Հունգարիայի, Լեհաստանի, ինչպես նաեւ Կորեայի, Ճապոնիայի, Անգլիայի եւ այլ երկրների հայտնի համերգասրահներում: Նա մշտապես հրավիրվում եւ ձայնագրություններ է կատարում Լոնդոնի Philharmonia Orchestra-ի հետ եւ թողարկել է շուրջ 14 ձայնասկավառակ: «Ես միշտ հիացել եմ հայ ազգի նվաճումներով, հատկապես՝ երաժշտական տաղանդով: Ուրախ եմ, որ ինձ ընձեռվել է հնարավորություն եւս մեկ անգամ համերգային ծրագրով հանդես գալ այս վաստակավոր նվագախմբի հետ եւ ներկայացնել իմ խմբագրած՝ Բրուքների 3-րդ սիմֆոնիայի համաշխարհային պրեմիերան»,- ասաց Ջոնգ Վիկտորին Յուն, ավելացնելով. «Ուրախ եմ, որ Հայաստանում կարող եմ նվագել Շոստակովիչ, ցավոք իմ երկրում արգելված է նրա ստեղծագործությունները կատարել»:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Նուպար Ղարիպյանի նոր բեմադրությունը

Սիդնեյի Հայկական բարեգործական ընդհանուր միության հրատարակությամբ լույս տեսնող «Միութիւն» երկլեզվյան ազգային, քաղաքական եւ մշակութային ամսաթերթի այս տարվա հունվար-փետրվար միացյալ համարը տեղեկացնում է, որ մարտի 16-ին տեղի ՀԲԸՄ-ի Ալեքսանդր սրահում կայանալու է թատերագիր Նուպար Ղարիպյանի «Հարուտության վնասները» կատակերգության (2 արար, 1 տեսիլ) ներկայացումը ՀԲԸՄ-ի «Վահրամ Փափազյան» թատերախմբի կատարմամբ: Ձեռնարկը կրկնվելու է մարտի 23-ին նույն վայրում:



Նուպար Ղարիպյանը ծնվել է Կահիրեում, 1942 թվին: Հաճախել է նախ Գալուստյան ազգային վարժարանը եւ այնուհետեւ իր իսկ խոսքերով՝ հետեւել է «կեանքի դպրոցի «համալսարանական» դասընթացքներուն, իբրեւ արհեստաւոր»: Ավստրալիա է տեղափոխվել 1964-ին, բայց կարճ ժամանակ անց նախ մեկնել է Լոնդոն (1967-69 թթ.) եւ ապա Կանադա (1969-1973 թթ.): Այնուհետեւ 1974-ին վերջնականապես հաստատվել է Սիդնեյում, որտեղ զբաղվել է թատերգություններ գրելով եւ բեմադրելով: Հեղինակ է 12 կատակերգությունների, որոնցից են «Երանելի ծառան», «Հարազատ թշնամին», «Վարձու ամուսինը», «Երջանկության վնասները», «Շուարած փեսացուն» եւ «Ինքնակոչ երաժիշտը»:

Այս վերջին պիեսը անցյալ տարվա սեպտեմբերին մեծ հաջողությամբ բեմադրվեց նաեւ Մոնրեալում «Էմիլ-լըկո» հանդիսասրահում՝ հյուրընկալությամբ Մոնրեալի ՀԲԸՄ-ի եւ Թեքեյան մշակութային միության: Ապա նաեւ Տորոնտոյում, Նյու Յորքում եւ Լոս Անջելեսում:

Նուպար Ղարիպյանը ոչ միայն թատերագիր է, այլեւ հրաշալի բեմադրիչ եւ դերասան, օժտված արվեստագետի բնածին հատկություններով: Հավատացած է, որ «խնդացնելը միջոց է, բայց ոչ նպատակ: Թատրոնը նախ եւ առաջ դպրոց մըն է եւ միաժամանակ՝ հայելի, որուն մէջ ժողովուրդը ինքզինք կը տեսնէ: Նպատակս համայնքին պատասխանատուներուն զգացնել, թէ ժողովուրդը ի՞նչ բանէ դժգոհ է, ի՞նչ բանէ կը գանգատի: Երբ ժողովուրդը կը խնդայ, կը ծափահարէ, կը նշանակէ, թէ թատրոնը իր նպատակին հասած է, ժողովուրդը ինքզինք տեսած է այդ թատրոնին մէջ»:

Ստեղծագործական նորանոր սխրանքներ նրան եւ հաջողության մաղթանքներ:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

# ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման աջակից



**Գյուղական համայնքների զարգացումը ենթադրում է համակարգված աջակցություն: Այդ տրամաբանությամբ առաջնորդվող՝ Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը տարիներ շարունակ ծրագրեր է իրականացնել տարբեր ոլորտներում: Հավատարիմ մնալով պատասխանատու գործելաոճին՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ն հերթական ներդրումն է կատարել Արմավիրի մարզում:**

**Քարակերտ, Լեռնագոգ, Մյասնիկյան, Դալարիկ, Շենիկ, Արգինա եւ Արթենի համայնքներում գործող 9 դպրոցներ համալրվել են կրթության ժամանակակից տեխնոլոգիաներով. ստեղծվել են Wi-Fi անկյուններ եւ տրամադրվել է «Home-Zone Turbo» փաթեթի շրջանակում գործող 11 հատ 3G երթուղիչ:**

**Համակարգված աջակցություն դրսեւորելուն նպաստել է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի հետ համագործակցությունը: Վերջինիս հիմնանորոգած Քարակերտի թիվ 1 դպրոցում ՎիվաՍել-ՄՏՍ-ն ստանձնել եւ իրականացրել է տարրական դպրոցի մոդելային դասասենյակի նորոգումն ու կահավորումը: Դասասենյակը բաղկացած է 2 մասից: Դրանցից առաջինը նախատեսված է դասերի, երկրորդը՝ խմբային աշխատանքների, խաղերի եւ հանգստի համար: Նորարար մոտեցում է պատ-գրատախտակը:**

**Ընդհանուր առմամբ, այս եւ վերը նշված ծրագրերի համար ՎիվաՍել-ՄՏՍ-ն հատկացրել է 3 մլն 850 հազար դրամ:**

**«Երկրի առաջընթացն ապահովելու նախապայմանը մայրաքաղաքին զուգահեռ՝ գյուղական համայնքների համաչափ զարգացումն է: Գյուղում բացառապես գյուղատնտեսությունը խթանելու ընկալումը վաղուց իրեն սպառած մոտեցում է դարձել: Տեխնոլոգիական նորագույն լուծումներով աշխարհի հետ հաղորդակցվելու մարտահրավերն արդիական է՝ անկախ բնակության վայրից: Նորարար լուծումներով այս դպրոցն աշակերտներին թույլ կտա ինքնադրսեւորվել եւ կայանալ հաճելի միջավայրում: Ստեղծված են բոլոր պայմանները՝ խելացի, ստեղծագործող եւ բացահայտող սաներից հրաշալի անհատներ ձեւավորելու համար»,- ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:**

**Քարակերտի թիվ 1 դպրոցում Wi-Fi անկյուններ են գործելու դասարանի ժամանակակից մոդել ներկայացնող ստեղծագործարանում եւ անգլերենի դասասենյակում: Ի դեպ, յուրահատուկ լուծում առաջարկող ստեղծագործարանը կրթական նորամուծություն է: Նույն տարածքում դպրոցի գրադարանի եւ համակարգչային սենյակի առկայությունը, դասեր եւ միջոցառումներ անցկացնելու հնարավորությունը խթանում են աշակերտի ստեղծագործականությունը:**

**ՎիվաՍել-ՄՏՍ-ն շարունակում է համակարգված ներդրումները՝ երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար: Հիշեցնենք, որ մեկ տարի առաջ, ընկերությունը Արմավիրի մարզում զգալի ներդրում է կատարել նաեւ հակակարկտային կայաններ տեղադրելու համար:**

# Նոր հրատարակություններ Մայր աթոռից

**Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ լույս է ընծայել Մայր աթոռի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի «Ս. Հաղորդությունը որպես ներման եւ հաշտության լեզու», «Մի երկնչի՛ր, բայց միայն հավատա՛ (Մարկ. Ե 36). Հայ առաքելական եկեղեցին՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հայեցակարգի առաջարկ» աշխատությունները:**

**Գեւորգ եպիսկոպոսն իր «Ս. Հաղորդությունը որպես ներման եւ հաշտության լեզու» գործում հանգամանորեն մեկնաբանում է Ս. Հաղորդության խորհուրդը Հայ եկեղեցու ավանդության մեջ: Հայ իրականության մեջ այս գիրքն առաջին աշխատությունն է, որ Հաղորդության խորհուրդը դիտարկում է մարդկային հարաբերությունների համատեքստում եւ բարոյականության այն շրջանակներում, որում ժամանակակից հավատացյալներն ապրում են իրենց ամենօրյա հավատը: Գիրքը պարունակում է Հայ եկեղեցու ավանդությանը բնորոշ առանձնահատկությունների արժեքավոր նկարագրություններ, որոնց բացահայտման ու բանաձեւման համար, բացի հայկական աղբյուրներից, օգտագործվել են նաեւ ժամանակակից աստվածաբանական ուսումնասիրություններ եւ խորհրդածություններ:**

**Գիրքը հրատարակվել է Մայր աթոռի բարերար տիար Գաբրիել Չեմբերջյանի հովանավորությամբ:**

**«Մի երկնչի՛ր, բայց միայն հավատա՛ (Մարկ.Ե 36). Հայ առաքելական եկեղեցին՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հայեցակարգի առաջարկ» գործում Գեւորգ Սրբազանն անդրադառնում է 21-րդ դարասկզբում մարդկության առջեւ ծառացած մարտահրավերներից մեկի՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի աստվածաբանական եւ բարոյական տեսանկյուններին: Գրքում ներկայացված է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հայեցակարգի վերաբերյալ Եկեղեցու դիրքորոշումն արտահայտող ծրագիր, որտեղ կարեւորվում է Հայ առաքելական եկեղեցու սպասավորի աշխատանքը ՄԻԱՎ վարակ ունեցող մարդկանց եւ նրանց ընտանիքների հետ, ինչպես նաեւ ուրվագծվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման գործում Հայ եկեղեցու աշխատանքի ուղղությունները:**

# Կարո Մուրադը չեմպիոնական գոտին կվիճարկի Բեռնարդ Հոպկինսի հետ

Հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարո Մուրադը IBF-ի վարկածով կիսածանրքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսի պարտադիր հավակնորդն է: Այնպես որ օրերս այդ վարկածով աշխարհի չեմպիոն հռչակված Բեռնարդ Հոպկինսը պարտավոր է չեմպիոնական գոտին պաշտպանել Կարո Մուրադի հետ մենամարտում:

Ներկայումս աշխարհի ամենատարեց չեմպիոն բռնցքամարտիկ, 48-ամյա Բեռնարդ Հոպկինսը հայտարարել է, որ ինքը լավ գիտի IBF-ի կազմակերպության գործող կանոնները եւ պետք է տիտղոսը պաշտպանի պարտադիր հավակնորդի հետ մենամարտում: Երկու բռնցքամարտիկների ներկայացուցիչները մեկ ամիս ժամանակ ունեն բանակցելու եւ հանդիպման վայրն ու ժամկետը որոշելու համար: Եթե այդ ընթացքում կողմերը համաձայնության չգան, ապա մրցույթ կհայտարարվի պրոմոութերական ընկերությունների մասնակցությամբ:



Բեռնարդ Հոպկինսն օրերս է նվաճել IBF-ի վարկածով կիսածանրքաշային կարգում աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ միավորներով հաղթելով չեմպիոնական գոտու տեր Տավորիս Կլաուդին: Այդ հաղթանակից հետո Բեռնարդ Հոպկինսը գլխավորեց կիսածանրքաշային կարգի բռնցքամարտիկների դասակարգման ցուցակը, իսկ Կլաուդը 2-րդ տեղից նահանջեց 5-րդ հորիզոնական:

29-ամյա Կարո Մուրադը դասակարգման ցուցակում 6-րդն է: Նա ներկայումս բնակվում եւ մարզվում է Գերմանիայում: Նրա մարզիչն էլ Ուլի Վեգներն է, որը մարզում է նաեւ Արթուր Աբրահամին: Հայ բռնցքամարտիկը պրոֆեսիոնալ ռինգում 27 մենամարտ է անցկացրել, որոնցից 25-ում հաղթել է, մեկն ավարտել է ոչ-ոքի, մեկում պարտվել է: Վերջին մենամարտը Կարո Մուրադն անցկացրել է 2012-ի հունիսի 2-ին: Դանիայում կայացած 8-ռաունդանոց մենամարտի 7-րդ ռաունդում Կարո Մուրադը տեխնիկական նոկաուտով հաղթել էր Սանդրո Սիպրոշվիլուն:

48-ամյա Բեռնարդ Հոպկինսը պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 63 մենամարտերից հաղթել է 53-ում, 2-ն ավարտել է ոչ-ոքի, 6-ում պարտվել է:

# «Արսենալին» չհաջողվեց կրկնել «Բարսելոնի» հաջողությունը

Չեմպիոնների լիգայի մրցաշարում հայտնի դարձան քառորդ եզրափակիչի բոլոր մասնակիցները: Մինչ այդ հաջորդ փուլի ուղեգիր նվաճած Դորտմունդի «Բորուսիային», Մադրիդի «Ռեալին», «Յուվենտուսին», ՊՍԺ-ին, «Գալաթասարային» ու «Բարսելոնին» միացան Մյունխենի «Բավարիան» եւ իսպանական «Մալագան»:

1/8 եզրափակիչի առաջին խաղում Լոնդոնում 3-1 հաշվով «Արսենալին» հաղթելուց հետո թվում էր, թե «Բավարիան» Մյունխենում ոչ մի խնդիր չի ունենա: Սակայն արդեն խաղասկզբում հյուրերը բացեցին հաշիվը: Իսկ երբ 86-րդ րոպեին «Արսենալը» 2-րդ անգամ գրավեց մրցակցի դարպասը, լարվածությունը հասավ գագաթնակետին: Բայց «Արսենալին» չհաջողվեց կրկնել «Բարսելոնի» հաջողությունը: 0-2 հաշիվը ձեռնտու էր «Բավարիային», որն էլ ի հաշիվ մրցակցի դաշտում խփած 3 գոլերի, կշարունակի պայքարը մրցանակի համար:

Թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Յուպ Հեյնկես** («Բավարիա»)-Խաղին շատ քննադատաբար պետք է վերաբերվել: Արագ գոլը շատ ձեռնտու էր «Արսենալին», ինչին հյուրերը ձգտում էին: Մենք գոլային ավելի շատ պահեր ստեղծեցինք, սակայն չիրացրինք: Մեզ չհաջողվեց նման դրվագներում հանդես գործել: Այս պարտությունը մեր ֆուտբոլիստների համար հիշեցում կլինի, որպեսզի նպատակին հասնելու համար քրտնաջան աշխատեն: Չեմ կարող ասել, թե որ թիմին կնախընտրեի քառորդ եզրափակիչում: Եվրոպայի լավագույն ակումբների դեմ միշտ էլ դժվար է խաղալը: Այնուամենայնիվ, հաճելի կլիներ մրցել «Բորուսիայի» հետ:



**Արսեն Վենգեր** («Արսենալ»)-Մեզ այսօր շատ քիչ բան չբավականացրեց հաջորդ փուլ մտնելու համար: Այսօր սաներս բնավորություն դրսեւորեցին: Իհարկե, ցավալի է չեմպիոնների լիգայի մրցաշարից դուրս մնալը, սակայն գոհ եմ թիմի ցուցադրած խաղից:

Իսպանական «Մալագային» սեփական հարկի տակ հաջողվեց 2-0 հաշվով ռեւանշի հասնել առաջին փուլում «Պորտոյից» կրած պարտության (0-1) դիմաց: Իսկոյի եւ Սանտա Կրուսի խփած գոլերը Մալագային քառորդ եզրափակիչի ուղեգիր պարգեւեցին:

Մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Մանուել Պելեգրինի** («Մալագա»)-Մեր մրցակիցը լավ թիմ էր, ուստի հարկավոր էր խելացի գործել: Առաջին րոպեներին մեր ֆուտբոլիստները մի փոքր նյարդայնանում էին, սակայն հետագայում խաղը կարգավորեցին: Իսկ «Պորտոյին» չհաջողվեց վտանգավոր պահեր ստեղծել: Այսօր «Մալագան» իրեն բնորոշ ֆուտբոլը ցուցադրեց եւ մտավ Եվրոպայի 8 ուժեղագույն ակումբների շարքը: Ինչ վերաբերում է վիճակահանությանը, ապա չէի ցանկանա հանդիպել թուրքական ակումբի հետ:

**Վիկտոր Պերեյրա** («Պորտո»)-Խաղի ելքի վրա ազդեցին Սթիվեն Դեֆուրի հեռացումն ու Ժոաու Մոուտինյուի վնասվածքը: «Մալագան» շատ ագրեսիվ էր գործում, բացի այդ էլ թիմին ֆուտբոլասերներն էին ակտիվորեն աջակցում: Այս խաղում ամեն ինչ մեր դեմ էր:

1/8 եզրափակիչի հանդիպումների ավարտից հետո բրիտանական William Hill բուքմեյքերական ընկերությունը գնահատել է պայքարը շարունակող թիմերի հնարավորությունները: Չեմպիոնների գավաթը նվաճելու ամենամեծ հնարավորություններն ունի «Բարսելոնը», որի հաջողության հասնելու գործակիցը 2,75 է: Այնուհետեւ գալիս են «Ռեալը»՝ 4, «Բավարիան»՝ 4,5, «Բորուսիան»՝ 9, «Յուվենտուսը»՝ 13, ՊՍԺ-ն՝ 21, «Գալաթասարայը»՝ 67 եւ «Մալագան»՝ 126:

# «Ռեալի» համար Ֆալկաոն 75 մլն եվրո արժե

**Մադրիդի «Ատլետիկոյի» ռմբարկու, կոլումբիացի հարձակվող Ռադամել Ֆալկաոն շարունակում է մնալ եվրոպական առաջատար ակումբների մարզիչների ուշադրության կենտրոնում: Վերջերս Լոնդոնի «Չելսին» 35 մլն եվրո է առաջարկել ֆուտբոլիստի դիմաց, սակայն իսպանական ակումբը մերժել էր առաջարկը:**

**«Ատլետիկոյի» ղեկավարությունը հայտարարել է, որ բոլոր թիմերի համար Ֆալկաոյի տրանսֆերային արժեքը 60 մլն եվրո է, իսկ ահա Մադրիդի «Ռեալի» համար ֆուտբոլիստը 75 մլն եվրո արժե: Դա արվել է այն նպատակով, որպեսզի արքայական ակումբը չկարողանա գնել Ֆալկաոյին: Եթե նման գործարք տեղի ունենա, ապա «Ատլետիկոյի» երկրպագուները մեծ աղմուկ կբարձրացնեն:**

ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

# ՀՀ հավաքականի նահանջը շարունակվում է



ՖՈՏՈԼՈՒՐ

**Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում կրկին նահանջել է 4 հորիզոնականով եւ զբաղեցնում է 84-րդ տեղը: Աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում ՀՀ հավաքականի առաջիկա մրցակից Չեխիայի ընտրանին նահանջել է մեկ հորիզոնականով՝ զբաղեցնելով 27-րդ տեղը: Իհարկե, դասակարգման աղյուսակին հավաքականների մարզիչները, հատկապես Վարդան Մինասյանը, մեծ նշանակություն չեն տալիս: Մեր հավաքականի համար ներկայումս առավել կարեւորը չեխերի նկատմամբ հաղթանակ տոնելն է: Յուրա Մովսիսյանի արդյունավետ խաղը ֆուտբոլասերների մոտ մեծ ոգեւորություն է առաջացրել եւ հուսադրում է, որ չեխերի հետ խաղում էլ «Սպարտակի» հարձակվողը կասի իր վճռորոշ խոսքը: Ինչ խոսք, հաղթանակի դեպքում Հայաստանի հավաքականը կբարելավի իր ցուցանիշները թե՛ ընտրական մրցաշարում, թե՛ դասակարգման ցուցակում:**

**Անփոփոխ են մնացել լավագույն տասնյակում ընդգրկված հավաքականների ցուցանիշները: Առաջատարը Իսպանիայի հավաքականն է, որին հաջորդում են Գերմանիայի, Արգենտինայի, Անգլիայի, Իտալիայի, Կոլումբիայի, Պորտուգալիայի, Հոլանդիայի, Խորվաթիայի եւ Ռուսաստանի ընտրանիները:**

**Ռուսներից հետո նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հավաքականներից 2-րդ ցուցանիշն ունի Ուկրաինայի ընտրանին, որը 2 հորիզոնականով նահանջել է ու զբաղեցնում է 48-րդ տեղը: Մյուս հավաքականների ցուցանիշներն այսպիսին են. 59. Ուզբեկստան, 62. Բելառուս, 69. Վրաստան, 89. Էստոնիա, 108. Լատվիա, 115. Լիտվա, 116. Ադրբեջան, 131. Մոլդովա, 139. Ղազախստան, 140. Թուրքմենստան, 152. Տաջիկստան, 201. Ղրղզստան:**

**Դասակարգման ցուցակում ամենամեծ առաջընթացն ունեցել է Աֆղանստանի հավաքականը, որը 48 տեղով բարձրացել եւ հանգրվանել է 141-րդ հորիզոնականում: Իսկ ահա Սուդանի հավաքականը 23 հորիզոնականով նահանջել է եւ զբաղեցնում է 127-րդ տեղը:**

# Սամուել Սեւյանը 50-տոկոսանոց արդյունքի հասավ

**ԱՄՆ-ի Տեխասի նահանգում անցկացված շախմատի մրցաշարում 13-ամյա ՖԻԴԵ-ի վարպետ Սամուել Սեւյանը 9 հնարավորից վաստակած 4,5 միավորով 43 մասնակիցների մեջ գրավել է 23-րդ տեղը: Մեկնարկային տուրում պատանի շախմատիստը պարտվեց հնդիկ գրոսմայստեր Պարիմարջան Նեգիին, որը 6,5 միավորով դարձավ մրցաշարի հաղթող: 2-րդ տուրում Սեւյանը ոչ-ոքի խաղաց Ֆրանցիսկո Գվադալուպեի հետ, այնուհետեւ 2 հաղթանակ տոնեց Լի Ջժիանյի եւ Մաուրիցիո Ռիոսի հետ պարտիաներում: Իր վերջին՝ 3-րդ հաղթանակը հայ շախմատիստը տոնեց 7-րդ տուրում՝ առավելության հասնելով Ջոնաթան Չիանգի նկատմամբ:**

**Սեւյանը մյուս պարտիաներում ոչ-ոքի խաղաց Ալեխանդրո Ռամիրեսի եւ Ջոշուա Ֆրիդելի հետ, պարտվեց Վալենտին Լոտովին ու Յարոսլավ Ժերեբուխին:**

# Ռմբարկուական մրցավազքում հաղթողի հավակնորդը Յուրա Մովսիսյանն է

**Ռուսական «Սպորտ-Էքսպրես» թերթն ամփոփել է «Ո՞վ կդառնա ՌԴ առաջնության լավագույն ռմբարկու» հարցման արդյունքները: Ֆուտբոլասերների մեծամասնության կարծիքով, մրցանակը կստանա Մոսկվայի «Սպարտակի» հարձակվող Յուրա Մովսիսյանը, որը ներկայումս 12 գնդակով գլխավորում է լավագույն ռմբարկուների ցուցակը: Նրան ձայն են տվել 7384 ֆուտբոլասերներ, ինչը հարցման մասնակիցների 56,1 տոկոսն է:**

**Յուրա Մովսիսյանը զգալիորեն գերազանցել է 2-րդ տեղում ընթացող ԲԿՄԱ-ի ֆուտբոլիստ Ահմեդ Մուսային, որի օգտին քվեարկել է մասնակիցների ընդամենը 14,1 տոկոսը (1857 ֆուտբոլասեր): Մուսան 9 գոլի հեղինակ է դարձել: 10 գնդակով ռմբարկուների ցանկում 2-րդ տեղում ընթացող «Զենիթի» հարձակվող Ալեքսանդր Կերժակովը ստացել է ձայների 12,3 տոկոսը (1618 ֆուտբոլասեր):**

**ՀՀ հավաքականի կիսապաշտպան, Կրասնոդարի «Կուբանում» 8 գոլ խփած Արաս Օզբիլիսին նախապատվությունը տվել է 91 ֆուտբոլասեր: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել են 13 153 ֆուտբոլասերներ:**

# Հռոմի պապը ֆուտբոլի երկրպագու է

Հռոմի նորընտիր պապ Ֆրանցիսկը արգենտինյան «Սան Լորենցո» թիմի երկրպագուն է: Նախկինում, երբ թիմում հանդես էր գալիս հանրահայտ հարձակվող Ալբերտո Ակոստան, «Սան Լորենցոյի» ֆուտբոլիստներն իրենց ինքնագրերով մարզաշապիկ էին նվիրել Հռոմի ներկայիս պապին:

Իսկ ներկայիս ֆուտբոլիստներից Հռոմի պապը երկրպագում է իսպանական «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսիին:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ՎՃԻՌ

# Սահմանադրական դատարանը ուժի մեջ թողեց ԿԸՀ-ի որոշումը

*1-ին էջից*

Հետաքրքրական է, որ թիվ 17/05 տեղամասի ընտրության արդյունքները, գործի քննության ընթացքում ներկայացված փաստարկներով, որպես բացառություն ՍԴ-ն անհավաստի համարեց, նշելով, որ անվավեր պետք է ճանաչել դրանք, եւ բոլոր նյութերը պետք է ուղարկել դատախազություն:

Րաֆֆի Հովհաննիսյանի ներկայացուցիչներ **Զարուհի Փոստանջյանն** ու **Կարեն Մեժլումյանը** որոշման հրապարակումից հետո լրագրողների հետ զրույցում մնացին նույն կարծիքին, ինչ նրանք բազմիցս հայտնում էին դատաքննության երեք օրերի ընթացքում: **Զ. Փոստանջյանը** նշեց, թե Սահմանադրական դատարանը վավերացրեց սուտը եւ կեղծիքը: Իսկ թե ինչու ժամանակին եւ պատշաճ ձեւով իրավական հնարավորություններից չեն օգտվել՝ Զ. Փոստանջյանը նկատեց, թե՛ բազմիցս հնչեցվեց, որ թե՛ իրավապահ մարմինները, թե՛ ԿԸՀ-ն, թե՛ ընտրատարածքային հանձնաժողովները ուղղակի դրսեւորել են բացարձակ անգործություն, այդ պայմաններում խոսել որեւէ իրավական պաշտպանության մեխանիզմի մասին ուղղակի անհեթեթություն է:

**Կարեն Մեժլումյանն** էլ նշեց, որ ՍԴ-ին Րաֆֆի Հովհաննիսյանի կողմը խնդրել էր ըստ էության անդրադառնալ դիմումին, ոչ թե մեխանիկական ձեւով, դա չի արվել, ՍԴ-ի որոշումը մինչեւ ժամը 18-ը պետք է հրապարակվեր, բայց հրապարակվել է մինչեւ 18:35-ը, սա իրավազո՞ր է:

Սերժ Սարգսյանի ներկայացուցիչ Դավիթ Հարությունյանին լրագրողները հարցրին ՍԴ նախագահի՝ անվստահության մթնոլորտը փարատելու գնահատականների մասին: Ըստ **Դ. Հարությունյանի**՝ ընտրական օրենսգրքի բարեփոխման հիմնական նպատակը հենց դա է եղել՝ գործընթացի բոլոր մասնակիցներին հնարավորություն տալ պատշաճ վերահսկողություն իրականացնել եւ բնակաբար այդ միջոցով բարձրացնել հանրային վստահությունը: Դրան մասնակից պիտի լինեին ընտրական գործընթացի մասնակից բոլոր քաղաքական ուժերը եւ պատշաճ կատարեին իրենց պարտականությունները: Դ. Հարությունյանը մատնանշեց, որ Ազգային ժողովի խմբակցություններից միայն երկուսն են իշխանական, բոլոր մյուսները նույնքան ներկայացուցիչ են ունեցել հանձնաժողովներում եւ թող վերահսկեին: Իսկ հանրային վստահության բարձացման համար նոր մեխանիզմներ ու փոփոխություններ նա հետագայում առաջարկելու է:

Ըստ ԿԸՀ նախագահ **Տիգրան Մուկուչյանի**՝ դատաքննությունը հայտնի դարձրեց, թե ի՞նչ քանակի դիմումների (ընտրախախտումների վերաբերյալ) մասին է խոսքը, ի՞նչ ծավալով է կողմն օգտվել իր իրավունքներից, ու այդ ամենից հետո մերկապարանոց հայտարարությունները ու հռետորական հարցադրումները՝ հազարավոր դիմումների չքննելու մասին, մեղմ ասած, տարակուսանք են առաջացնում: Իսկ ներկայացված բոլոր դիմումները, ըստ Տ. Մուկուչյանի, պատշաճ քննություն անցել են, հո դրանց վերաբերյալ որոշումները չպե՞տք է բխեին դիմողների հույզերից, երազանքներից ու ցանկություններից:

ՍԴ որոշման հրապարակմանը ներկա չէր երկրորդ դիմող կողմ Անդրիաս Ղուկասյանը, իսկ Րաֆֆի Հովհաննիսյանն ու իր կողմնակիցները ՍԴ որոշման վերաբերյալ գնահատականներ կհնչեցնեն այսօրվա հանրահավաքում:

**«Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող «Երևանը համայն հայության մայրաքաղաքն է» թեմայով լավագույն գրական ստեղծագործության IX միջազգային մրցույթի**

# ԿԱՐԳ

## 1. Ընդհանուր դրույթներ

Ներկա դրույթները սահմանում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագրով բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների և դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար անցկացվող Iղ միջազգային մրցույթի նպատակն ու խնդիրները, ինչպես նաև նրա անցկացման կարգը

Մրցույթի թեման է **«Երևանը համայն հայության մայրաքաղաքն է»:** Մրցույթն անց է կացվում «Ռուսաստանի հայերի միություն» համառուսաստանյան հասարակական կազմակերպության, «Համաշխարհային հայկական կոնգրես» հայկական հասարակական կազմակերպությունների միջազգային միության, ՀՀ սփյուռքի նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից:

Մրցույթն անցկացվում է 2013 թվականի **մարտի 15-ից մինչև հունիսի 15-ը**

Մրցույթի արդյունքները կամփոփվեն և կհրապարակվեն 2013թ. սեպտեմբերին, իսկ հաղթողների պարգևատրման հանդիսավոր արարողությունը կկայանա հոկտեմբերին:

## 2. Մրցույթի նպատակը

Մրցույթի նպատակն է Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի սովորող երիտասարդությանն ավելի մոտիկից հաղորդակից դարձնել հայոց մայրաքաղաքի՝ Երևանի հինավուրց ու նոր պատմությանը, զարգացման հեռանկարներին, Հայաստան – Սփյուռք գործակցության ամրապնդման, աշխարհով մեկ սփռված հայությանը համազգային պահերի շուրջ համախմբման գործընթացներում քաղաքամայր Երևանի նոր դերակատարմանը:

Ցանկալի է, որպեսզի մրցույթի մասնակիցները իրենց աշխատանքներում անդրադառնան Երևանի, որպես աշխարհի հնագույն քաղաքներից մեկի պատմությանը, ներկայացնեն նոր Երևանի վերաբերյալ իրենց տեսլականը ոչ միայն որպես անկախ Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կենտրոն, այլև դիտարկեն այն որպես յուրաքանչյուր հայի սրտում միակ հայրենիքի, մայր հողի մարմնացման խորհրդանիշ:

Սփյուռքում ծնված ու մեծացած երիտասարդներն իրենց աշխատանքներում պետք է գործնականորեն ցույց տան այն դերը, որն այսօր խաղում է Երևանը նրանց ազգային ինքնագիտակցության զարթոնքի գործում:

Մրցութային աշխատանքը պետք է արտացոլի յուրաքանչյուր մասնակցի, անկախ բնակության վայրից, պատկերացումները նոր Երևանի կերտման գործում իր դերակատարման վերաբերյալ, ինչպես նաև անձնական խոհերն ու հույզերը նրա ապագայի մասին: Պետք է հստակ ցույց տալ, թե ինչպիսին կարող է լինել հայ երիտասարդության ներդրումը Հայաստանի հզորացման, տնտեսական և մշակութային ներուժի ամրապնդման գործում:

## 3. Մրցույթի մասնակիցները

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և հայկական սփյուռքի բուհերի, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողներն ու դպրոցների բարձր դասարանի աշակերտները: Մրցույթին կարող են մասնակցել նաև այլազգի սովորող երիտասարդության ներկայացուցիչներ

### Մրցույթի պայմանները

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մրցույթին մասնակցել մեկ ստեղծագործությամբ, որը կարող է լինել ինչպես չափածո, այնպես էլ արձակ ստեղծագործություն (բանաստեղծություն, պատմվածք և այլն):

Մրցույթին մասնակցելու իրավունք են ստանում թեմային և նշված ծավալին համապատասխանող աշխատանքները: Վերոնշյալ պահանջներին չհամապատասխանող գործերը ենթակա չեն քննարկման:

## 4. Մրցույթի կազմակերպման կարգը

Մրցույթը ղեկավարելու նպատակով ստեղծվում է Կազմկոմիտե, որը որոշում է մրցույթի անցկացման ժամկետները, կարգը, ձևավորում մրցութային հանձնաժողով և ամփոփում մրցույթի արդյունքները

Մրցութային հանձնաժողովը

❖ մշակում է աշխատանքների գնահատման չափանիշները

❖ ստուգում և գնահատում է աշխատանքները

❖ սահմանում է մրցանակային տեղերը և անվանակարգերը

❖ որոշում է մրցույթի հաղթողներին և ցուցակը ներկայացնում Կազմկոմիտեի քննարկմանը

Մրցույթի Կազմկոմիտեին իրավունք է վերապահվում անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարել մրցույթի անցկացման կարգում

Մրցույթի արդյունքներն ուսանողների և աշակերտների համար կամփոփվեն առանձին-առանձին, յուրաքանչյուրին հատկացնելով երեքական տեղ:

## 5. Հաղթողների պարգևատրումը

Մրցույթում առաջին երեք տեղերը պահած թ՛ե ուսանողները և թ՛ե աշակերտները կպարգևատրվեն «Notebook» համակարգիչներով և դիպլոմներով, իսկ առանձին անվանակարգերում հաղթողներն՝ արժեքավոր նվերներով և պատվոգրերով

## 6. Մրցութային աշխատանքին ներկայացվող պահանջները

Մրցութային աշխատանքները պետք է ներկայացնել մինչև 2013 թվականի հունիսի 15-ը: Ներկայացվող աշխատանքները կարող են լինել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով՝ համակարգչային 4 - 5 էջի սահմանում:

Աշխատանքները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով Word ֆորմատով: Աշխատանքները կարող են ներկայացվել նաև անձամբ կամ ուղարկվել փոստով

Մրցութային աշխատանքին պարտադիր է կցել մասնակցի անձնական տվյալները պարունակող տիտղոսաթերթ.

- Ազգանուն
- Անուն
- Հայրանուն
- Ծննդյան թիվը
- Բնակության հասցեն
- Հեռախոսը
- Էլեկտրոնային փոստի հասցեն
- Ուսումնական հաստատության անվանումը, վայրը, հասցեն և հեռախոսահամարը:

Աշխատանքներ կարող են ներկայացվել մրցույթի կազմակերպիչների հասցեով՝

**Ռուսաստանի հայերի միության և Համաշխարհային հայկական կոնգրեսի հայաստանյան մասնաճյուղ**
Երևան, Տերյան 69
Հեռ. (37410) 51 04 42
(37410) 51 04 43
(37410) 51 04 40
Ֆաքս (37410) 51 04 41
Էլ. փոստ՝ **vladis@netsys.am**

կամ

***ՀՀ սփյուռքի նախարարություն***
*ՀՀ, Երևան, Վ. Սարգսյան 26/1*
*Էլ. փոստ՝ allarmenian@mindiaspora.am*

***ՀՀ կրթության և գիտության նախարարություն***
*ՀՀ, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարության III շենք, 611 սենյակ*
*Էլ. փոստ՝ kgnhanrakrtutun@mail.ru*

***Մրցույթի կազմկոմիտե***

**Կորել է** ա/ձ Արթուր Ենոքյանի արտադրության առքուվաճառքի թիվ 561 լիցենզիայի ներդիրը՝ տրված ՀՀ կենտրոնական բանկի կողմից:
Համարել անվավեր:

**«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր**

**Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից**

- **Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ - Խորհրդատվություն**
- **«Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար**

*Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆԵՐՔՈՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴ**

| հ/հ | Գույքի հասցեն (գտնվելու վայրը) | Գույքի օգտագործման նպատակը | Հողամասի մակերեսը (քմ) | Շինության մակերեսը (քմ) | Մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ծերենցի 3/3 | Կաթսայատուն | 141.36 | 158.76 | 10,800,000 |
| 2 | Գ-3 թաղամաս h.41 | անավարտ շինություն | 1,021.93 | 1,919.98 | 41,600,000 |
| 3 | Անդրանիկի փողոց 10/1պ 57 տարածք | ոչ բնակելի տարածք | | 154.50 | 12,700,000 |
| 4 | Բագրատունյաց 49 | Կաթսայատուն | 237.46 | 237.46 | 24,400,000 |
| 5 | Սասունցի Դավիթ 13 | կաթսայատուն | 122.70 | 122.70 | 13,400,000 |
| 6 | Չարենցի փողոց 76/6 | կաթսայատուն | 54.82 | 42.00 | 10,300,000 |
| 7 | Աբովյան 62պ. 31 տարածք | ոչ բնակելի տարածք | | 40.95 | 12,850,000 |
| 8 | Վարդանանց 7պ 76 շին | ոչ բնակելի տարածք | | 32.77 | 4,080,000 |
| 9 | Վարդանանց 7պ 77 շին | ոչ բնակելի տարածք | | 22.92 | 2,860,000 |
| 10 | Նուբարաշեն 2ա շենք 26 շինություն | ոչ բնակելի տարածք | | 118.51 | 11,270,000 |
| 11 | Թումանյան 11 պ 72 տարածք | ոչ բնակելի տարածք | | 10.30 | 1,030,000 |
| 12 | Շիրակի 88/1 | Հասարակական | 105,641.80 | 3,154.00 | 60,100,000 |
| 13 | Դավթաշեն ՇՋԿ h. 3 | Կաթսայատուն | 20,891.14 | 2,402.60 | 139,300,000 |
| 14 | Արտաշիսյան պ., 3 նրբ. 26/2 | Կաթսայատուն | 141.75 | 117.06 | 3,370,000 |
| 15 | Շերամի 23/4 | Կաթսայատուն | 318.72 | 292.82 | 15,900,000 |

Աճուրդին կարող են մասնակցել այն իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք Երևան համայնքի նկատմամբ օրենքով սահմանված կարգով ֆինանսական պարտավորություններ չունեն:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ Երևանի քաղաքապետարանում, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի ինտերնետային կայքում՝ WWW.YEREVAN.AM:

Աճուրդի պայմանների մանրամասներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել Երևանի քաղաքապետարան (Արգիշտի 1, մուտքը աշտարակի կողմից, 2-րդ հարկ, հեռ. 514173):

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են տեղական վճարի՝ 10000 դրամ և մեկնարկային գնի 5%-ի չափով նախավճարի վճարման անդորրագրերը:

Աճուրդը կայանալու է 2013թ մարտի 29-ին ժ.16.00-ին , ք. Երևան, Արգիշտի 1 հասցեում:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2013թ մարտի 29-ը, ժամը 14.00-ը:

***ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՈՒ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 14.3.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: